



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

943

944

613  
P-49

2010

ԳԱՂՏՆԻՔ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ԿԱ.Մ

ԱՐԱԽՆՈՐԴ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵՆԱՅ

Վ.Ա.Մ ԱՄՈՒՍՆԱՅԵԼՈՅ


ԵՒ

ԱՄՈՒՍՆԱՅՈՂ.ԱՅ

Գ. ՊԱԴ.ՏԱ.ՅԱՐԵԱՆ

ՇԱԽԻՒԻՔ

ԸՆԹԵՐՅԱՍԵՐ ՈՒՐՈՒՔ



Կ. ՊՈԼԻՍ  
ՏՊԱԴՐՈՒԹՅՈՒՆ Յ. ԴԱՎԱՖԻԱՆ

— 1872 —

30

613.9

ԳԱՂՏՆԵՐԻ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ԿԱՍ

ԱՅԱՋՆՈՐԴ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵՆԱՅ


ՎԱՍԻ ԱՄՈՒՍՆԱՅԵԼՈՅ

ԵՒ

ԱՄՈՒՍՆԱՅՈՂԱՅ



Գ. ԳԱՂՏՆԱՄԱՐԵԱՆ



Կ. ՊՈՒԽ

ՅԱՎՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՂՏՆԱՄԱՐԵԱՆ

— 1872 —

ՅԱՐԱՉԱՐԱՆ

Ամուսնական կենաց յառաջ բերած աղետից  
վրայ հարեւանցի ակնարկ մը բաւական է ապա-  
ցուցանել որ շատերը կամուսնանան առանց ա-  
մուսնութեան ինչ լինելուն վրայ ուղիղ գալա-  
փար մը ունենալու և նորա պահանջումներն դիտ-  
նալու : Ուստի սոյն գրքոյկո 'ի լրյու կընծայեմք  
որպէս զի երիտասարդաց և օրիորդաց ուսու-  
ցանէ թէ ի՞նչ է ճշմորիտ ամուսնութիւնը , ի՞նչ են  
նորա պահանջներն և ի՞նչ ընելու է ամուսնական  
կենաց մէջ երջանիկ կեանք վարելու համար :

Յուսամք որ այս առաջնորդիս ձայնին անսա-  
լով քիչ ատենէն աղդիս մէջէն ամուսնութեան  
պատճառած տղետներն բնաշխնջ լինին և նորա  
խակական պտուղներն , այն է սէր երջանկութիւն  
և խաղաղութիւն վայելելու բարեբախտութեանը  
արժանանամք :

Գ. ՊԱՂԱՍԱՐԵԱՆ

2118-57

ԳԱՂՑՆԻՔ

## ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ԿԱՄ

ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵՆՍ.3

### ԳԼՈՒԽ Ա.

Կոչումն եւ նպատակ ամուսնութեան

ԱՐԱՐԻՉԸ բուսոց մէջ ոչ թէ միայն ծաղիկ այլ նաեւ պտուղ և նորա մէջ ալ, նոր էութեանց գոյացմանը համար, սերմ է դըրած . Ուստի մարդս ալ բնութեան այս կարգադրութեանը հետեւելով կարծելու չէ թէ ամուսնութիւնը զգայական հաճութեանց վայելմանը և յագեցմանը մէջ կը կայանայ, այլ թէ նորա նպատակն է նոր էութեանց հիմն դնել:

Առն և կնոջ մէջ տեղի ունեցած սերական յարաբերութիւնը ծննդական գործարանաց զանազանութենէն չէ միայն . ասի նիւթական գրգիռ մ'է լոկ որ կոգեւորի և կաղնուանայ, երբոր նա սիրոյ հետ միանայ . յայնժամ այլն ու կինն երկու կէս կը կազմեն և այս երկուքը նիւթապէս, բա-

ըոյապէս և հոգեկանապէս անթերի ամբողջութիւն մը կը ձեւայնեն : Երբ նոքա ծնընդական յարմարութեան պարբերութեանը հասնին՝ յայնժամ այս երկու կէսերուն մէջ հակում մը կը ծագի առ միմեանս որ թէեւ օրիորդին կամ երիտասարդին կուրծքին մէջ որոշ գաղափարի և նաղատակի մը չծառայեր, սակայն այս հակման զօրութիւնը որոշակի յայտ առնէ :

Ամուսնութեամբ այրն և կինը կամ այրական և իդական անհատութիւնք 'ի մի կը ձուլին և մի մարմին և մի հոգի լինին : Այսպէս 'ի մի ձուլեալ ամուսնական միութիւնը մերթաւելի արական և մերթաւելի իդական ձեւ մը կառնա թէ մարմնակրն, թէ հոգեկան և թէ բարյական նկատմամբ :

Ամուսնութեան մէջ այրն և կինն իրենց սկզբունքներն մէկզմէկու զոհ բերելու չեն, այլ զանոնք հաստատ պահելու են . ասով ամուսնական միութիւնն զօրաւոր կազմ և վայելուչ ձեւ կառնու :

« Գիտես թէ մարդս ի՞նչպէս միշտ երիտասարդ կը մնայ » կըսէ Պէխըր հոջակաւոր գերմանացի բժիշկը . « կնոջ մը հետ ամուսնական և տղայք ծնանելով, որով նա իր սերունդներուն մէջ յաւերժ կը ներկայանայ » : Այսպէս կուսուցանէ բնութիւնը . նա ծառերէն և ծաղիկներէն սերմն յերկիր կը թափէ որով նոր բոյսեր կը դոյանան . յայնժամ ծե-

րայեալ ծառն չորանայ և ծաղիկն թառամելով մեռանի : Ինչպէս որ բնութեան ընդհանուր կանոնն է Հայութ նմանապէս նորահիմնական օրէնքն է Շանհ : Ասոնք են բնութեան վճարելի երկու պարտքերնիս, աշխարհ կուգանք մեռնելու համար, կը մեռնինք որպէս զի ծնանիմք :

Վատ ամուսնութիւնը մեծ դժբաղդութիւն մ'է, զի չկայ աշխարհիս վրայ այնքան մէկզմէկու հակառակ ծայրեր քան սէր և ատելութիւն : Կոյր է սէրն և անկարող ինքզինքը սանձելու : Մարդս կրնայ բարի նպատակաւ ամուսնութեան ձեռնարկել, սակայն երբ սիրոյ պտուղն անգամ մը վայելածէ և ըստ բաւականին յագեցած, կրնայ մէկ կամ միւս կողմանէ դէպք մը առիթինիլ և սիրոյ տեղ ատելութիւն, հրեշտակի տեղ սատանայ և երկնից տեղ դժոխք նորա բաժինն ըլլալ : Մարդիկ երկու թշնամիներէ կը տանջուին, ասոնք են բաղձանք և երեւակայութիւն . այս երկուքն ալ սիրոյ մէջ կը դժոնուին :

Ծէրը միշտ մարմնապէս կը գատէ երբէք հոգեկանապէս թէեւ շատ անդամ ինքինքը խաբուած ալ տեսնէ . ուստի պէտք չէ անխորհրդաբար, արագութեամբ և ջերմարեամբ այլ խոհեմութեամբ և պաղարեամբ ամուսնութեան ձեռնարկել :

Ամուսնութիւնը միշտ երկու կողմ կու-

նենայ . նա կրնայ երջանիկ կամ թշուառ լի-  
նիլ : Երբ մէկը երջանիկ ամուսնութեան ար-  
ժանացած է և ամուսիններուն մին մեռնի  
յայնժամ միւսին համար աշխարհի վրայ ասկէ  
աւելի գառնադոյն ցաւ չինար լինիլ :

Երեք պարբերութեանց բաժանալ է  
ամուսնական կեանքը պէտք , պէտք և վորք :  
Սկիզբն կամ հեշտական պարբերութիւնը  
քաղցր է և սիրուն : Միջին պարբերութիւնն  
է երբ ամուսինք զաւկներավ շրջապատեալ  
են , մկրտութիւնք և յուղարկաւորութիւնք  
տեղի կունենան , այլ և այլ դժբաղու-  
թիւնք , ընտանեկան բեռն և խան ամու-  
սիններուն վրայ կը ճնշեն : Ամուսնութեան  
վերջին պարբերութիւնը ծերութիւնն է .  
Ճնունդք այլ եւս դադարած են և ըստւ  
ունք կը հանգստանան և այժմ իրենց որդ-  
ւոցն խնամքին կը կարեան :

Կնոջ կարելի է փոքր ինչ աւելի աղա-  
տութիւն տալ , սակայն զանի սանձարձուկ  
թողելու չէ բնաւ : Խոհուն կինը նկատելու  
է թէ իր ամուսնը երբեմն ծանր պարս-  
դայից մէջ կը դանուի և ռւասոի պէտք չէ  
սրտմտի երբ նա փոքր ինչ անանելի լինի :  
Նա յայնժամ փոխանակ նորա հետ կռուե-  
լու զանի միսիթարելու և ջանալու է բարի  
խօսքերով և համեստ ընթացքով ու զիդ  
ճանապարհաց առաջնորդել զայն : Խոհուն  
էրիկը կրնայ վատ կինը բարւոքել նոյնպէս :

ալ համեստ կինը կրնայ վատ այրը իր չար ըն-  
թացքէն վերադարձնել , միայն թէ համբե-  
րութիւն , իմացողութիւն , ժամանակ և պա-  
տեհութիւն է հարկաւոր մինչեւ որ սրտերն  
զիրար լաւ ճանաչեն :

Ամուսնական կենաց մէջ ամուսինք դի-  
րար այլոց առջին յանդիմանելու ւեն . կա-  
նանց պատիւն էրիկներունն է և էրիկներու-  
նը կանանց . ատկայն էրիկը միշտ խորհե-  
լու է թէ ինքն է կնոջը գլուխը , տղայոց  
հայրը և տանը տէրը :

Նախանձը ամուսնական կենաց մեծ վը-  
նամներ կը պատճառէ , նա չափազանց սէրէ  
և անվտահութենէ կը ծագի : Ասով բա-  
զում անդորր ընտանիք կործանած են : Կան  
մարդկի որ նորա օժանդակութիւն կրնեն կա-  
նանց մէջ առ ամուսինս իւրեանց անվտա-  
հութեան սերմերն ցանելով : Այսպիսիներէն  
հեռանալու է օձերէ և վիշապներէ փախչե-  
լու նման : Վերջապէս կան բաներ որք թէեւ  
ըստ ինքեան բոլորովին անվասու և անմեղ  
են , սակայն այլոց գայթակղութիւն չտալու  
համար հրաժարելու ենք անոնցմէ :

## ԳԼՈՒԽ Բ.

Ամուսնական կենաց համար դահանջեաց մարմնական  
յատկութիւնք .

Այն անձն որ իրեն նմանն արտադրել և  
քաջառողջ սերունդի մը հիմն գնել բաղձայ  
պարտի ինքն իր զօրութեանցն կատարեալ  
շափին ժամանած լինիլ :

Հստ օրինաց բնութեան , մերձաւորու-  
թեան հակումն մարդուս մէջ չդոյանար մին-  
չեւ որ մարմինն աճման , զօրութեան և հաս-  
տատակազմութեան որոշ աստիճանի մը հա-  
մած չլինի . յայնժամ կրնայ յուսացուիլ թէ  
մերձաւորութեան արարքն վնասարեր չի-  
նելին դատ թէ մարմնոյ և թէ հոգւոյ  
վերայ նպաստաւոր ազդեցութիւն պիտի  
թողու :

Մարդս այն ատեն միայն ամուսնական  
կենաց ֆիզիգապէս յարմար կրնայ համար-  
ուիլ , երբ նորա ծննդական դորձարանք ի-  
րենց պաշտօնին և որոշմանն համար կատա-  
րելապէս զարգացած և անթերութեան աս-  
տիճանին հասած են , նաեւ երբ մարմնոյ  
միւս մասերն այնքան զօրութիւն ստացած  
են որ բնութեան ցցուցած յատակադին  
համաձայն իրեն նման մ'արտադրէ :

Մարդս ըստ սեռին կիմային և կենցա-  
ղալարութեան ուշ կամ կանուխ ամուսնական  
կենաց յարմար կըլլայ :

Այլն ծննդական դորձարանաց համար  
երկարագոյն ժամանակի կարօտի քան զկինն .  
նա սովորաբար քանի մի տարի աւելի կը  
պահանջէ ամուսնական կենաց յարմար սեպ-  
ուելու քան զկինն : Զերմ երկիրներու մէջ  
զարգացման և յարմարութեան պարբերու-  
թիւնը կը համառօտի , ցուրտ կիմայից տակ  
կերկարի :

Բարեխառն կիմային մէջ քաջառողջ օ-  
րիորդ մը 14 կամ 15 տարեկան եղածին պէս  
մերձաւորութեան հակում ունենալ կսկսի .  
իսկ երիտասարդին մէջ սոյն դրդիոն 17 կամ  
18 երրորդ տարւոյն մէջ կծնի : Յետ այսորիկ  
նոքա սակաւ ժամանակի են կարօտ իրենց  
կատարելութեան ժամանելու և պտղաբեր  
ամուսնութեան յարմար սեպուելու : Օրիորդն  
բնութեան կարդագրած Պարբերականին  
սկիզբ առնելին երկու կամ երեք տարի ետ-  
քը յարմար է ամուսնութեան , երիտասարդն  
աճման կատարելութեան հասնելին օ կամ 6  
տարի ետքը :

Բազում օրիորդք յառաջադոյն յարմարա-  
նան ամուսնութեան քան զայլս . այն որ մէ-  
կու մը համար դեռ կանուխ է կրնայ այլոց  
բնական կարօտութիւն լինիլ : Կարճահասակ  
և հաստամարմին անձինք յառաջադոյն կա-  
տարելութեան կը ժամանեն , բարձրահասակք  
և բարակք իրենց դորձարանաց կազմութեա-  
նը անթերութեանը համար առաւել ժամա-

նակի կարօտին . նաեւ նոյա արտադրիչ զօրութիւնը աւելի ուշ կդոյսանայ : Նրբակաղմ և գդայուն ջղերու տէր անձինք սերական յարաբերութեանց աւելի ուշ կարօտութիւն կզդան քան թէ զօրաւոր կաղմութեամբ , չղոս և վառվուուն անձինք : Ամենէն վերջը նոքա ամուսնանալու վրայ կրնան խարհիլ ու շոնց կաղմութիւնը տկար , վիզերնին երպայն և կուրծքերնին հարթ ու նեղ է , որոնք նուրբ և խիստ սպիտակ մնրթավ և շրջանակաւոր կարմրութեամբ ծնօտներ և բարձր ուսեր ունին , այսպիսիք աւելի բարակացաւի յարմարութիւն ունին քան ամուսնական կենաց : Նոքա պարտին սպասել մինչեւ որ յարմար կենցաղավարութեամբ այս ընդունակութեան դէմ մարտնչին և զանի յարթայորեն եթէ չեն ուզեր սորա դէմ գործելով իրենց մէջ թաքեալ հիւանդութեանց դուրս ժայթքելուն և մահուան ժամուն սլանալով իրենց վրայ յարձակելուն տեղի տալ : Նոյնը նաեւ պատանեկութեան մէջ հիւանդութեանց ու թարկեալ եղողներու կվերաբերի . նոյա բռնութիւնն առաւելագոյն ժամանակի է կարօտ հիւանդութեանց պատճառաւ եղած կորուստն վնրադարձնելու և նոյա պատճառաւ արդիւեալ աճումը զարդացնելու :

Կուսականականներն ծնողք կը տկարացնէ ժամանակէն յառաջ կը ծերացնէ զանոնք , և վատառողջ սերունդ կարտադրէ :

Գեռահասք ամուսնանալով թէեւ առաւել այրը կործանման մատնուի քան թէ կինը . բայց և այնպէս ասի կնոջը արդանդին մէջի նոր դոյսութիւն առնող էակին վրայ ալ կազդէ , զի անդիմադրելի ճշմարտութիւն մ'է թէ երախայից ֆիզիքական զօրութիւնը առաւել մօրմէն քան թէ հօրմէն յառաջ կուդայ . ըստ այնմ անկատար զարդարման տէր կանայք սովորաբար տկար տղայք կունենան : Դեռահաս կանայք միշտ վիժելու վաւանդին մէջ են :

Բնութեան հակառակ է նայւ ուշ առաւելաններն : Պարբերականին դադարելն նշան է կանանց համար որ այլ եւս չեն յաբանը որդեննդեան : Արտնց համար՝ բնութիւնը , արտադրիչ զօրութեան սպասելն ցոյց տալու համար որոշ սահման մը չէ դրած :

Սնհաւառար առաւելաններն + ալ բնութեան օրինաց դէմ են : Ծերութեան նշաններն իր վրայ կրող անձ մը որ իբր մարդ և քաղաքացի ունեցած պարտքերէն լուծեալ է և կենացն վերջին քառորդն իր զաւակացը ընտանեցը շրջանին մէջ կանցնէ , նա յիրաւի մեր խորին ակնածութեանը արժանի է : Սակայն երբ նա լոկ մոքէն անցնէ մանկամարդ օրիորդի մը հետ ամուսնանալ , յայնժամ նորու յիմարութիւնը ծաղրելի է :

Գեռահաս օրիորդ մը երբ ինքինքը ծեր մարդու մը սառուցեալ և դողդոջուն բազ-

կացն յանձնէ , իր փափուկ իդութիւնը արա-  
տաւորող կասկածներ կը յարուցանէ այլոց  
մոտացը մէջ : Յիշաւի երբեմն ակնածութիւն  
և երախտապարտութիւն այսպիսի զոհողու-  
թեանց պատճառ կը բերուին , սակայն խիստ  
տարակուսելի է թէ արդեօք հոս այլ հա-  
կումներ և հաշիւներ չեն տեղի ունենար :

Ընդհակառակն վերոյիշելոյ , այն է , երբ  
ժաղկանաւուկ երերոսարոյ ճը դառաս քիչորոյ ճը կամ  
այրէ ինչը մը հետ ամուսնանայ , յայնժամ  
այսպիսի ամուսնութեան մը հետեւանքն ա-  
ռաւել եւս ֆասսակար լինին . այս տեսսակ  
ձեռնարկութիւնք սովորաբար մէկ կողմանէ  
զդայուական վայելմանց գրգռուման և միւս  
կողմանէ շահախնդրութեան արդիւնքն են :

Տարիքներուն անհամաձայնութենէն զատ  
կայ նաեւ անհայտնութիւն նարհական զօրու-  
թեանց . փափուկ և անզօր օրիորդ մը՝ ջղոտ  
և անհատնում զօրութեան տէր հսկայի մը  
հետ , կամ թէ նրբակազմ երիտասարդ մը  
զինքը , թէ կազմութեամբ և թէ զօրութեամբ  
գերազանցող կնոջ մը հետ ամուսնալով  
ասի շատ չանցած ոսկորներէ բագկացեալ  
կմտիքի մը , իսկ նա ապրող դիսկի մը պիտի  
փոխուի :

## ԳԼՈՒԽ Գ.

Պայմանը եւ կանոնը տմուսնական յարմարութեան

Ամուսնական յարմարութիւններէն մին է  
մարդուական ածման և զարդացման կատարե-  
լութիւնը :

Երիտասարդ մը որքան ալ զօրեղ և ա-  
ռողջ ըլլայ 24 տարեկան լինելէն առաջ ա-  
մուսնանալու չէ : Օրիորդն 20 տարեկան ըլ-  
լալով մարմնոյ աճման և զարդացման կա-  
տարելութեանը հասած կը սեպուի . ուստի  
յարմար և կարող կըլլայ որդեծննդեան և  
ճշմարիտ մայր լինելու :

Այրը կնոջմէն միշտ քանի մի տարի գծ  
լինելու է , լինու որ կինը ամուսնական յա-  
րաբերութեանց ճաշակն յառաջադոյն կ'ո-  
րուսանէ քան զայրն :

Ամուսնական յարաբերութեանց նախնա-  
կան պահանջն է աւագուշը կազմութիւն նորմայ :  
Առողջութիւնը կը պահանջէ 1. Լաւ սպասու ճը ,  
ստամոքսի լաւութիւնն խալ զօրաւոր ախոր-  
ժակէ և դիւրամարտութենէ կը ճանաչի :  
2. Աւագու սպասուանք . ասոնք կերպակուրն մարտ-  
ղութեան պատրաստելու միակ միջոցներն և  
լաւ հիւթոյ նշաններն են : 3. Բարեկառ կու-  
զոր ճանաչի նորա կամարաձեւ լայնութե-  
նէն , հանդարտ , դիւրին և խոր նշառութե-  
նէն որ կընայ առանց նեղութեան շունչը  
ժամանակ մը պահել :

Ամուսնական կենաց մարդս անյարմար ընող և ամուսինք խիստ թշուառացնող հիւնդութիւնք են.

1. Թոքախտն և բարակացաւն. ասոնք ամուսնական յարաբերութեամբ կը վատթարանան, տարափոխին և իրենց թոյնը սերունդէ սերունդ կը տարածեն :

2. Զղային տկարութիւնք և յօդուածացաւն որ յաճախակի կը վերադառնան :

3. Լուսնոտութիւն. թէեւ կան օրինակներ որք ցոյց տան թէ այս ախտն ունեցող կանայք ամուսնանալով բժշկուեր են սակայն կան նաեւ օրինակներ որք կապացուցանեն թէ սոյն ախտն ունեցողք, մանաւանդ գիւղագրգիւռ երիտասարդք, ամուսնութեամբ մէջ այլ եւս վատթարացեր են. բազում օրինակներ ալ կը հաստատեն թէ այս անբուժելի ախտին լոկ արտաքին երեւոյթն բաւական է զայն այլոց վրայ վոխարդել:

Ծնողք լաւ գիտնալու են թէ իրենց տղայքը և աղջկունք ինչ մարմնական թերութեանց կամ հիւանդութեանց ենթարկեալ են և լարմանական թերութիւնք թէեւ արդիւնաւոր ամուսնութեան արդելք չեն սակայն պէտք չէ զանոնք ամուսնանալէ առաջ թաքսւն պահել, զի երբ ամուսնանալէ ետեւ յայտնուին կլնան ամուսնոց մէկուն կամ միւսին վրայ դժոհութիւն և պազութիւն բերել և ամուսնական կեանքը դառնացնել:

Նակներ ցոյց կուտան որ բազումք սէրէ շարժեալ ամուսնութեան ձեռնարկած են և յետոյ ամուսնոց մէկուն կամ միւսին վրայ թերեւս չնչին թերութիւն մը, որ թաքեալէր, ՚ի լցո դարվ սէրն ատելութեան է վոխուած և ամենայն դժկամակութեամբ ամուսնական լուծն կը քաշեն: Ուստի այն ծընողները որք իրենց զաւակաց թերութիւններն թաքուն պահեն ծանր պատասխանառութեան տակ են :

Սիրոյ ճաշակին վայելման կերպին, ժամանակին և չափին նկատմամբ բնութեան ուսուցածին հետեւելու են ամուսինք որպէս զի վնաս չ'կրեն, ինչու որ երբ մարդու բնութեան պահանջմանը և օրինաց չանալով երեւակայութեանց և դդայական հաճոյից դիմէ, յայնժամ բնական գրդիռն անյագենալի և աննուածելի ծարաւի կը վոխուի որ հուսկ ուրեմն բնական զօրութիւնըն փճանալով նորա գրդիռն ալ կը մեռնի :

Ամուսնական յարաբերութեանց մէջ շըռայլութիւնը և անշափաւորութիւնը առն համար յանհունս վնասակար է քան թէ կնոջը համար. սորա պատճառն այնքան պարզ և յայտնի է որ հարկ չէ բացատրել, թէեւ հասակի, կենցաղավարութեան և մարմնոյ կազմութեան համեմատ վնասներն կը տարբերին: Ամուսնական յարմարութիւնն նոր ըստացած երիտասարդ մը մերձաւորութենէ զկնի

թէև տկարութիւն և յադուրդ չ'ստանար և  
կրից , գործարանաց ու երեւակայութեան  
ջերմ դրդիռէն վերստին նոյն դործողու-  
թեանը ձեռնարկելու մղուի , սակայն ճիշդ  
սոյն կէտին այս հոգեկան ազնիւ կարողու-  
թիւնը ուղեղին զարդացմանը ձառայող կեն-  
սական զօրութիւնը հարուածելով կործան-  
ման կը մատնէ զանի :

Մարմինը զարդացման և աճման կատա-  
րելութեանը հասնելով 24 էն մինչեւ 44 ե-  
րորդ տարին զօրութեան ամենաբարձր աս-  
տիճանը կը համարուի . 50 երորդ տարւոյն  
հետ կենսական զօրութիւնն երթալով կը-  
նուազի և ուստի մարմնոյ ամենառողջ և ա-  
մենազօր կազմութիւնն ունեցողն անդամ չա-  
փաւորութեան կանոնը մտքէն հանելու չէ :

Հոգին և մարմինը ամեն գործողութեանց  
մէջ զուգընթաց քալելու են . ուստի ամուս-  
նական յարաբերութեանց ատեն հոգւոյ ներ-  
քին դրութիւնը մեծ կարեւորութիւն ունի :  
Երբ սիրտը զանազան կիրքերէ յուղեալ է և  
երբ տրտութիւնը մարդուս հոգին կը ճնշէ ,  
յայնժամ մերձաւորութիւնը կործանման օ-  
ժանդակիչն է : Խոռովութիւնը , տրտութիւ-  
նը և ուրիշ կիրքերն կարող են կեանքն հա-  
մառօտել , որքան առաւել կենսական զօրու-  
թեան կործանումը սիրտի փութայ երբ նոյն  
կրից հետ ջղերու ձգտումն և կենսական հիւ-  
թոց կորուստն ընկերանայ :

Անդամալոյցք , ախոնդանաւորք և թոքախ-  
տաւորք շուայլ և անշափաւոր ընթացքով ի-  
րենց տկարութեան հրոյն վրայ իւղ կը լեց-  
նեն . այս ախտերը բուն բնական սի-  
րոյ չաղաչար գործածութենէն ծնունդ կառ-  
նուն : Իսկ թոքախտաւորք սոյն ընթացքով  
արագաքայլ գերեզման կընթանան : Ուստի  
զգուշանալու է անբարոյական վէպերով ,  
բանաստեղծութիւններով , ջերմացուցիչ ու-  
տելիքներով և ըմպելիքներով և այլ գրգռիչ  
միջոյներով երեւակայութիւնը գրգռելէ , ո-  
րոնք կարող են մարդս բնութեան կարգադ-  
րած շրջաններէն դուրս մղել :

Կենդանեաց և մարդկանց ծննդական  
գործարանաց բնական դիրքն մերձաւորու-  
թեան բնութեան համաձայն կերպով կա-  
տարուելուն համար խստ կարեւոր է նկա-  
տելու : Ընդունելութիւն անկարելի է եթէ  
այրական սերմն ազատորէն արդանդն չ'թա-  
փանցէ . հորիզոնական դիրքն հարկաւ սորա  
ամենապատշաճ կընայ համարուիլ :

Վերջապէս նկատելու է նաեւ որ մերձա-  
ւորութիւն տեղի չունենայ առատ ընթրիքէ  
և ոգելից ըմպելիք խմելէ ետեւ , գինովու-  
թեան մէջ , մարմնական և մտաւորական  
բուռն աշխատանքէ և կիրք ելլելէ զինի ,  
ոչ ալ պարբերական միջոցին կամ անկէ քիչ  
առաջ կամ քիչ ետքը , ոչ ալ յղութեան ա-  
ռաջի և վերջի ամիսներուն մէջ կամ որդե-

ծընութենէն անմիջապէս ետքը : Մերձաւորութեան համար օրուան ժամանակաց պատշաճոյնն է առաւոտեան կանուխ ժամերըն . յորժամ մարմին և հոդին նորէն զօրութիւն են սույցած և ջիղերն իրենց զօրութեանը դադարմակէտին են ժամանած :

Թողլաւ գիտնան ամուսինք որ վերոյիշեալ կանոններուն անհամաձայն և հակառակ կեանք վարող հայրեր և մայրեր ոչ թէ միայն ժամանակէն առաջ գերեզման են մտած , այլ նաեւ բազում մայրերու արդանդներն իրենց որդոցը գերեզման են եղած ամուսնական կենաց մէջ շռայլ , անկարդ և անկանոն կեանք անցնելով :

## ԳԼՈՒԽ Դ.

Յըսութիւն .

Ազգաց քաղաքականացմանը հետ նոր սովորութիւնք և ունակութիւնք ծնունդ առին , որոնց պատճառաւ այսպիսի հիւանդութիւնք երեւան ելան որք բնական վիճակի մէջ ապրող ազգերու բոլորովին օտար են : Այս սովորութեանց մնասակար աղդեցութիւնը թէ և երկու սեռին ալ կը վերաբերի , բայց մանաւանդ իդական սեռին վրաց զգալի հետեւանքներ է թողած որ յղութեան և որդենութեան միջոցին կը տեսնուին :

Յղութեան ատեն սովորական եղած այն ամեն ցաւերն և աղետներն ինչպէս որ վայրի կենդանեաց անձանօթ են նոյնպէս ալ բնութեան համաձայն ապրող ժողովրդոց մէջ չեն պատահիր : Բայց որովհետեւ անհ նար է մարդս վերստին իր բնական վիճակին դարձնել ուստի հարկ է յղութեան վիճակին վերաբերեալ շրջաններ և կանոններ դնել որպէս զի մօրն և նորածին մանկան կեանքն և առողջութիւնը պաշտպանուի :

Յղութիւնը ոչ թէ հիւանդութիւն է այլ առողջութեան կատարելութիւնը և կենաց երկարութիւնը ապահովցնող վիճակ մը : Հանրածանօթ ճշմարտութիւն մ' է որ տկար օրիորդք յղութեամբ տեւողական առողջութիւն կ'ստանան :

Յղութեան միջոցին իդական մարմինը աճման մէջ է և ուստի կերակուրք , ցուրտն և կրից գրգռումը սոյն ժամանակը աւելի կազդեն մարմնոյ քան ուրիշ ատեն , և ջային տկարութիւն , վիժումն , ցնցումն ջղաց , արեան հոսումն և այլ հիւանդութիւնք կը պատճառեն որք չէ թէ յղութեան պահանջներն այլ անկարդ կենցաղավարութեան արդիւնքներն են :

Երբ առողջ կնոջ մը պարբերականը դադըրի և միւնոյն ատենը միզելու յաճախում , սրտի խաւնուիլ , ախորժակի բացուիլ , անսովոր կերակրոց փափաք և քնոյ հակում տեսնուի

մեծ վստահութեամբ կրնայ ըսուիլ որ նայդի է։  
Սոյն վստահութիւնս զօրութիւն և հաստա-  
տութիւն կառնու երբ պարբերականին դա-  
դարումէն 20 կամ 22 շաբաթ զինի կինը ար-  
դանդին մէջ երախային շարժիլլ զգայ, «որ  
չէ այլ ինչ քան թեթեւ և յանկարծական  
բաղխումմը։ Երբ կին մը իր յդութիւնը դիտ-  
նայ, կուղէնակ իմանալ որդեճնութեան ժա-  
մանակն երբ լինելն մէկ մը մայրական ու-  
րախութեան և մէկ մալնորածնին հիւրընկա-  
լութեանը ընտանեկան պատրաստութեանց  
ձեռնարկելու համար։

Սոյն ժամանակն հաշուելու համար պար-  
տի կինը հետեւեալ կանոններուն հետեւիլ։

Երբ վերսիշեալ նշաններէն յղութիւնը  
հաստատ ապացուցեալ է պէտք է կինը պար-  
բերականն վերջին անդամ դադրելուն օրն  
միտք բերէ և սոյն օրէն 280 օր հաշուէ։ այս  
280 երրորդ օրն որդեճնութեան օրն պիտի  
լինի։ Սակայն զանազան պատճառներ կրնան  
այս հաշիւն ունայնացնել։ ուստի ուրիշ կեր-  
պոլ պէտք է հաշուել։ կինը երախային ար-  
դանդին մէջ ըրած առաջին շարժմանը օրն  
միտքը պահելու է։ ասի յղութեան ամբողջ  
պարբերութեանը ճիշտ կէսն է։ նոյն օրէն  
20 շաբաթ կամ 140 օր համրելով որդեճնու-  
թեան օրն կրնայ որոշուիլ։

Այս հաշիւն առաջինին հետ բաղդատէ  
և միջին օրն առ իբր ամենամօտ օրն որդեճ-

նութեան։ Օրինակով մը բայցատրենք։ Եթէ  
առաջի հաշուլ 280 րդ. օրն Ապրիլի 7 րդ. օրն  
իսկ երկրորդ հաշուլ Մարտի 25 րդ. օրն գը-  
տար, յայնժամ Ապրիլի առաջին օրն կրնայ  
որդեճնութեան մօտագոյն թուականն հա-  
մարուիլ։ Յայտնի է որ այս հաշիւս չ'կրնար  
ճիշտ որդեճնութեան օրն ցուցնել։ այսու ա-  
մենայնիւ յդի կնկան մը համար բաւական է  
գիտնալ որ այս կամ գալ շաբթու որդեճնու-  
թիւնը կրնայ տեղի ունենալ որպէս զի ըստ  
այնմ շարժի և անհաճոյ դէպքերու տեղի  
չ'տայ։

Գրքոյկիս վերջն Ամսանական Տարեցոյց  
մը դրած եմք որ ընդունելութեան, երա-  
խային արդանդին մէջ շարժելուն և որդե-  
ճնութեան օրն բոլոր տարւոյն համար ցոյց  
կուտայ։

Յդի կանանց առօրեայ ընթացքին նկատ-  
մամբ կըսենք թէ նոքա իրենց սովորականէն  
այնքան տարբերելու չեն զի յանկարծական  
փոփոխութիւնք միշտ վասակար են։ Առողջ  
և զօրաւոր կանայք յղութեան ատեն ալ ա-  
մենայն կերպիւ իրենց ընտանեկան սովորու-  
թեանցը կրնան հետեւիլ միայն թէ ամեն  
բանի մէջ ալ վերջին աստիճանի վեհապե-  
նիւ պարտին նկատել։ կերպակուրք պարզ  
և սովորական տեսակներն լինելու են։ Ամեն  
դժուարամարս և զգուանք պատճառող կե-  
րակուրներէն զգուշանալու են։ Յդի կանանց

փափաքներն լոկ անվասո եղած առեն յա-  
գեցնելու է : Միս և բուսեղէնք՝ ի միասին ե-  
փելու և ուտելու են . միայն մէկէն կամ միւ-  
սէն սնանելն վնասակար է : Աղած և չորցած ,  
սադի և խոզի պարարտ միան դժուարամարս  
են . դիւրամարս են աղաւնիի , հաւի , հոր-  
թի և թարմ եղան միան և որաք : Առաջին-  
ներն աշխատող և զօրաւոր ստամոքս ունե-  
ցող կանանց կյարմարի իսկ , երկրորդն տկար  
ստամոքս ունեցող և շարունակ նստելու սո-  
վորեալ կանանց :

Սիսեռն , բակլան , լուրիան , կաղամբն ,  
ստեղինն և շողդամն դժուարամարս են ուս-  
տի կամ յղի կանայք բնաւ ուտելու չեն  
կամ խիստ չափաւոր կերպով դործածելու  
են : Այն բոյսերն որ միզելու յաճախութիւն  
պատճառեն բնաւ դործածելու չեն մանա-  
ւանդ այն կանայք որ անդամմը վիժած են .  
զի նոքա վիժելու կը նպաստեն : Ամառը  
թարմ լուրիան , սպանախն , եփած պտուղք  
և ձմերն չոր սալորն , նարինջն , շաքարով ե-  
փած խնձորը գետնախնձորն , հաւկիթն և տե-  
սակ տեսակ ապուրներ կրնան դործածուիլ :

Ըմպելեաց մասին յղի կանայք քանի որ  
պարագաներն չեն պահանջեր իրենց սովո-  
րութենէն տարրերելու չեն :

Ամենալաւ ըմպելիքն է մաքուր ջուր :  
Խահուէն , թէյն և քարեջուրն կայտառ կա-  
նանց վնասակար է զի բորբոքում և ա-

ըեան հոսում կը պատճառեն . իսկ տկար կա-  
նայք զանոնք չափաւորապէս դործածելով  
կրնան կազդուրիլ :

Ոգելից ըմպելիք բնաւ դործածելու չեն .  
նոքա ստամոքսի տկարութիւն կը պատճա-  
ռեն և մարսողութեան կարողութիւնը կը  
թուլացնեն , արիւնը գլուխը և արդանդն  
կուղղեն , ջիղերու ձգտումն , արեան հոսում  
և բորբոքում պատճառեն և ժամանակին լրա-  
նալին առաջ որդեծնութեան կառաջնորդեն ,  
և բաց ՚ի դմանէ արդանդին մէջ գտնուած  
երախային վրայ խիստ յոռի ազդեցութիւն  
կը թողուն : Փորձառութիւնը ցոյց տայ որ ո-  
գելից ըմպելեաց գերին եղողներուն ման-  
կունքը բթամիտ , ապուշ , խուլ ու համր լի-  
նին : Ուստի յղի կանայք գոնէ իրենց ար-  
դանդին պաղոյն սիրոյն համար թող ոգելից  
ըմպելիքներէ զգուշանան :

## ԳԼՈՒԽԵ

Կաթնտուութիւն .

Մայր մը իր զաւակն անձամբ սնուցանե-  
լու է , այս է բնութեան նպատակը կանանց  
կաթ պարզեւելովը : Այն մայրը որ չուզէր  
անձամբ իր զաւակն կաթ տալ , բնութեան  
օրինաց դէմ կը մեղանչէ և ինքզինքը ամե-  
նասիրելի զուարճութենէ մը կը զրկէ . զի յի-  
րաւի սիրալիր մօր մը համար չկայ մեծագոյն

բերկրութիւնն քան տեսնել որ իւր արդան-  
գին անզօր և տկար պտտողը մօրն ստինք-  
ներն պարպելով օր քան զօր կը գիրանայ և  
և կուռքի : Շատ մայրեր սորա հակառակ գոր-  
ծելով պատճառ են տուած որ կաթն ետ  
փախչի . որոյ հետեւանքն է եղած կորուստ  
առողջութեան և կենաց :

Սկիզբէն դժուար է երախայն ստինքին  
վարժեցնել մանաւանդ անդրանիկ մանկունք  
մօրն փոքրիկ ծիծերն չկարենալով իրենց շըր-  
թանցը մէջ ամփոփել կը թողուն զանոնք և  
այլ ևս չեն ուզեք բերաննին առնել : Եթէ  
սորա շուտով հոգ չ'տարուի ստինք կուռին ,  
փոքրիկ ծիծերն բոլորթին կաներեւութա-  
նան և երախայն կամ կաթնտու կնոջ մըյանձ-  
նուելու է և կամկերակուր տալու է անոր : Ուս-  
տի երբ որդենութեան ատեն կամ անկէց  
քիչ մը ետքը ստինք ուռենալ սկսին բաւա-  
կան ժամանակ կաթ ուտող վարժ երախայ  
մը դանենով նորա ծծել տալու է ստինքը :

Որդենութենէն ետեւ մայրն քանի մը  
ժամ քնանալէն զկնի նորածին երախային  
ծիծ տալու է , և թողելու չէ որ մանուկն  
ծարաւի . ասավ ստինք պարպուելով ուռելէ  
ազատ կը մնան : Առողջ կանայք կաթնտուու-  
թեան ջերմ գրեթէ չեն ունենար : Երախայն  
՚ի կղբանէ այնքան փափաքանօք չ'ուտեր և  
ուստի ծիծերն չեն վիրաւորուիր և դիւրաւ  
ստինքներուն կը վարժուին :

Սակայն կաթնտուութիւնը յաջող վիճակի  
մէջ եղած ատենն անգամ դժուարութիւնք  
կը պատահին : Երախայն ստամոքսի անկար-  
գութիւն , փորացաւ ևայլն ունենալով ծի-  
ծերն անհամբերութեամբ շըթանցը մէջ կամ-  
փոփէ , զանոնք կը խածնէ , կը քաշքչէ իբ-  
րեւ թէ իւր ցաւոց դարմանը նորա մէջ կը  
վինտուէ . ասով ծիծերն ալ կը վիրաւորուին :  
Սորա դարմանը ստինք ժամանակ մը անգոր-  
ծածելի պահելն է . սակայն ասի անկարելի  
լինելով վէրքն կը սաստկանայ և ցաւն ան-  
տանելի կըլլայ և անհնար լինի երախային  
ծիծ տալ : Այսպիսի պարագայից մէջ նախ  
ջանալու է երախային ցաւերն նուաճնէլ :  
Տաք կաթով գրեխ ընելով կամ ջերմ ջրով  
լուալով երախային առողջութիւնը կրնայ վե-  
րագառնալ : Իսկ մօրն ծիծերուն վրայ պաղ  
ջուրի մէջ թաթախեալ լաթ դնելու և եր-  
բեմն ալ գիստորի փոշի ցանելու է : Յետոյ  
երախային հակառակ դիրքով ծիծ տալու է ,  
այսինքն եթէ մօրը ձախ կողմէն ծիծ կը  
տրուէր այժմս աջ կողմէն սկսելու է . ասով  
ծիծերուն արդէն վիրաւորեալ տեղերն ճընշ-  
մանէ ազատուելով վէրքն բուժիլ կ'սկսի :  
Այս կերպով շարունակելու է երախայն յա-  
գեցնել ու ծիծերուն մորթն դօրացնել մինչև  
որ դժուարութիւնք յաղթուին :

Հարկ չէ երախային անընդհատ ծիծ տալ  
զի ասի թէ մօրն և թէ երախային վսաս

կուտայ . առաջնը անզօր և ուժաթափ լինի իսկ երկրորդին ստամոքսը կ'աւրուի : Սկիզբէն բաւական է օրը , այսինքն գիշեր և ցերեկ ՚ի միասին , Յ կամ Դ անդամ ծիծտալ , յետոյ միայն Յ անդամ , վերջը և և կաթէն կտրելէ առաջ միայն Յ անդամ :

Կտանդաւոր է նաև գիշերն անկողնոյ մէջ նստած ծիծտալ , զի մայրն քնոյ մէջ իյնալով երախայն կրնայ կաթէն խեղդուիլ կամ սահիլ և վնասուիլ : Մայրը պարտի գիշերը կաթ տուած ատեն անկողինէն ելլել աթուի մը վրայ նստիլ , որով արթուն կը մնայ և գժբախտ արկածոց տեղի չ'տար :

Կաթէն կտրելէն քանի մը շաբաթ առաջ երախային կովու քաղջ կաթ տալու է . ասով մէկ մը բերանը օտար անօթէ խմելէ սովորի և ոտամնքն ալ օտար կաթն մարսելու վարժուի : Կաթէն կտրելն ալ կամաց կամաց լինելու է , որպէս զի մանկին առողջութիւնը վտանգի տակ չ'կինայ , փոփոխութիւնը այնքան զգալի չըլլար և մայրն կաթնտուութեան ջերմէ ազատ մնայ , մանաւանդ երբ նա մէկն ՚ի մէկ մննդարար կերակուը չուտէր այլ սակաւ առ սակաւ , և շատ մարմնական շարժում կընէ : Խններորդ ամսուան մէջ , երբ առջեւի երկու ակռաներն դուրս են ցցուած , յարմարագոյն է երախայն կաթէն կտրելու :

•••••

## Գ Լ Ո Ւ Խ Զ .

Կաթնտու կին .

Եթէ անկարելի ըլլայ մօր մը իր երախայն անձամբ սնուցանել , յայնժամ կաթնտու կին մը հարկաւոր լինի : Շատերն կը կարծեն թէ կաթնտու կանանց իւղոտ , պարարտ և համեմաւոր կերակուրներ և զօրաւոր գինի կամ գարեջուր տրուելու է որպէս զի նորա կաթն մննդարար լինի : Այս գաղափարն փուճ է և սիսալ : Կաթնտու կանայք իրենց սովորականէն շատ տարբեր կերակուրներ ու տելու չեն : Նոյնպէս ալ ընտանեկան գործերու նկատմամբ սովորական ընթացքէն այնքան շեղելու չեն նոքա : Եթէ կաթնտու կինը աղքատ և աշխատաւորաց աստիճանէն է պարտի նաեւ , իրը սնուցիչ օտար մանկանց , ըստ սովորութեան ժիր և գործունեայ ըլլալ . միայն թէ ուժաթափ լինելու չափ աշխատելու չէ և մարմինը թուլացնող շարժումներէ զգուշանալու է , որպէս զի ինքը առողջ մնայ և հետեւապէս առողջ և մննդարար կաթ մատակարարել կարենայ : Այս կանոնիս հետեւելով և միտ ու բուսեղէն ՚ի միասին կերակուր շննելով և ուտելով , կաթնտու կանայք իրենց զօրութիւնը կը պահեն , չեն գիրանար և հետեւապէս ծոյլ , դանդաղ և կամակոր

չեն լինիր , այլ ուրախ , առողջ , արթուն , ժիր և բարեկարդ , որով երախայն ալ լաւ աննդոյ հետ բարւոք դարման և հոգատարութիւն կը վայելէ :

## ԳԼՈՒԽ Է.

Դարմանումն Երախայն :

Երախայք խանձարոց մէջ փաթութեն բարերախդարար վերնալու վրայ է : Հազիւթէ երախայն մօրն արդանդէն կ'ելլէ , հազիւթէ նա կսկսի անդամներն աղատօրէն շարժել և ահա նոր կապերով խեղճ մանկիկը կը կաշկանդեն . այս , երբեմն այն աստիճան կը ճնշեն որ թշուառ արարածն հազիւ չնչառութիւն կրնայ ընել : Գոնէ չեն խորհիր որ կաշկանդեալ մանուկը ոչ թէ կռնակին վրայ այլ մէկ կողման վրայ պառկեցնեն որպէս զի ջուրը բերանէն աղատ դուրս վազէ :

Նորածին մանկիկը աղատ թողլու է իւր փոքրիկ անդամներն երկնցնելու , քաշելու և շարժելու համար . գոնէ մօրն արդանդին ջրայն մէջ ըրած շարժմանց չափ շարժելու աղատութիւն տալու է նորա : Ամեն տեսակ կապ , ճնշում և փաթութել , պարզօրէն ըսելով , շարժումը , և ուստի աճումը կարգիլէ : Այն ժողովրդոց մէջ որ այս վատ սովորութիւնը չկայ մարդիկ սովորաբար զօրաւոր

լինին , և անդամներու ներդաշնակութիւնն կը տեսնուի նոցա վրայ , իսկ ուր որ մայրերն ըստ այսու սովորութեան իրենց երախայքն կը կապկապեն հոն լի է սապատողներով , կադերով և ծուռ սրունքներով : Երախայն խանձարուցին մէջ շարունակ անցածող փորձեր կընէ անդամներն շարժելու և ուժաթափ լինի : Անդամներու ճնշումը արեան շրջանը կը դանդաղեցնէ և երախային զարդացումն և զօրանալը կարգելու , հետեւապէս մանկիկը տկարակազմ լինի : Ոմանք կրսեն թէ տղայք աղատ թողրւելով նոցա անդամներն կրնան անցարմար դիրք մ'առնելով ճնասուիլ : Սակայն երախայք չեն կրնար այնքան զօրաւոր շարժում ընել որ անդամք ճնասուին , և եթէ անցարմար դիրքի մէջ ըլլան նորա պատճառած ցան շուտով ուղղիղ դիրքին պիտի առաջնորդէ զանոնք : Ուստի երախայք լայն և թոյլ լաթերու մէջ դրուելու են առանց կաշկանդելու , կապելու և ճնշելու , և թոյլելու է որ անդամներն աղատաբար շարժին : Սակայն այնքան շատ լաթերու մէջ դնելու չէ , զի չափազանց տաքութիւնը օդին մարմնոց վրայ ըրած աղդեցութիւնը կիսանդարէ , Մաքուր , պաղ օդը մանկանց չ'խասէր , ընդհակառակն օդտակար է նոցա և կ'զօրացնէ զանոնք : Իսկ յերմ օդը տկարութիւն և թոյլութիւն և չերմ կը պատճառէ և մահուան որս կընէ երախայն :

Երախայք մեծ օրօրոցի մէջ դրուելու են որպէս զի դիւրաւ և անվտանգ շարժիլ կացնան, իսկ երբ բաւական զօրութիւն ստացած են, թողելու է որ սենեակին մէջ յայս և յայն կոյս թաւալին . թող այն փոքրիկ խարդախները ուղածնուն պէս իրենց տկար անդամներն շարժեն, այսպէս շուտով պիտի զօրանան նոքա : Այս կերպով մեծցած և խանձարոց մէջ ասպրող երախայ մը թէեւ մի և նոյն տարիքն ունենան սակայն երկուքին մէջ խիստ մեծ տարբերութիւն տեսնուի :

Անհոգ մայրեր և ծոյլ աղախինք խանձարութի սովորութիւնը կը յարգեն և չեն ուղեր զանի թողուլ, զի խեղճ մանկիկն լաթերու մէջ կապելով անկիւն մը կրնան նետել առանց նորա աղաղակներուն ականջ կախելու : Անգութ մայրեր . գիտցէք որ խանձարոաց մէջի մանկիկը առաւել մաքրութեան կը կարօտի և գոնէ այս մասին ձեր անբարբառ գերիներուն պէտք եղած դարմանը տարէք :

Այն բանը որ երախայն ինքնին կարող է սովորիլ, յիմարութիւն է սովորեցնել ջանալ: Կայ արդեօք ոչինչ չանք մը քան մանկանց քալել սովորեցնել: Երբ նոքա մէկ ոտքը միւսին քով գնելու չափ կարողութիւն ունենան յայնժամ բաւական է միայն օդնել որ ասի յառաջ տանին: Երախայներն փոխանակ սենեակին ապականեալ օդին մէջ բանտարկելու

չաւագոյն է զանոնք մարգարետինը տանիլ: Թող նոքա հոն դլուրին, չորս կողմ սողան և հարիւր անդամ իյնան, ամենեւին փոյթչ է այս . զի թէկ մանկիկն կրնայ քանի մի փոքրիկ վէրքեր ստանալ սակայն իր մատաղ հասակէն աշխարհի ցաւերուն կը վարժուի: Սենեակին ապականեալ օդին մէջ քալել ըսկըսող երախայն տկարակազմ և անդոր լինելով վերստին սողալ կոկսի, իսկ բացօդեայ տեղերն վարժուող մանկունք կայտառ կը լլան :

Սովորութիւն է եղած երախայք նոելէն ետև լուանալ . առի լաւ սովորութիւն մ' է: Ոմանք ջրոյ մէջ գինի ալ կը խառնեն, սակայն ոչինչ բան է այս և բնութեան հակառակ: Լուացումը գաղջ ջրով սկսելու է և կամաց կամաց պաղ ջրոյ վարժեցնելու է երախայն: Ոչ թէ միայն մաքրութեան համար երախայք յաճախ լուալու է՝ այլ պաղի և տաքի վարժեցնելու համար որպէս զի յետոյ փսասէ աղատ լինին :

Օրոցոյի սովորութիւնը բաղում թշնամիներ ունի . մանք զանի վասակար և լուսաւորեալ գարիս անյարմար խաղալիք մը կը համարին, այլք մանկանց հիւանդութեանց շատերուն պատճառն օբօրոցն կը սեպէն: Սակայն բնութիւնը երախայն իր մօրն արգանդէն ասոր վարժեցուցած է զանի տեսակ մը ջրոյ միջոցաւ սահուն ընելով, և որքան որ մայրն շարժման մէջ գտնուի, այն-

քան հաճութիւն կ'զգայ մանկիկը և արդան-  
դին մէջ հանդարտ կը կենայ . ընդհակա-  
ռակին որքան որ մայրը անշարժ կեանք մը  
անցնէ այնքան անհանդարտ լինի երախայն  
որովայնին մէջ : Եթէ կենաց այն իմաստուն  
Արարիչը երտխային դրդութելն արդիւելու  
համար շարժում է կարդադրած , ինչ իրա-  
ւունք ունինք սոյն իմաստուն կարդադրու-  
թեան դէմ բողոք բառնալու : Միայն ման-  
կիկը պէտք է հանդարտութեամբ և զգու-  
շութեամբ օրօրել և մինչև նորա ոտք ել-  
լելն շարունակելէ ետեւ վերջացնելու է ե-  
րախայտական հասակին վերաբերող այս տո-  
վորութիւնը :

## ԳԼՈՒԽ Բ:

Վարժութիւն երտխայից .

Մանկունք որքան դժուարութեանց վար-  
ժուին այնքան առողջ և դոհ կեանք կանցը-  
նեն : Եթէ մանուկին ծանօթ լինի իրեն ա-  
նօդնականութիւնը , եթէ ամեն նեղացուցիչ  
պարագաներ նորա շրջանէն հեռու պահուին  
յայնժամ նորա համար առաւել վտանդա-  
ւոր ապառնի վիճակ մը կը պատրաստուի :  
Ուստի այս մասին ալ բնութեան ցոյց տուած  
շաղին հետեւելու է : Բնութիւնը անընդ-

հատ վարժէ զմանկտիս , նոցա կազմութիւնը  
ամեն տեսակ փորձերով կը զօրայնէ և նոցա  
կանխաւ կուսուցանէ ցաւ և նեղութիւն տա-  
նիլ : Ակրայներն նոր բուսած ատենը նոքա  
ջերմ , փորացաւ և ջղաց ձգում կունենան .  
Հաղը զանոնք կը նեղէ և որդերէն կը տան-  
ջուին և արեան մէջի եղած անմաքրութիւնք  
զանազան բորբոքմանց և վէրքերու ծագում  
կուտան : Գրեթէ ամբողջ առաջն տարին  
հիւանդութիւն և վտանդ է : Սակայն երբ  
այս փորձերն անցնին յայնժամ տղայն զօ-  
րութիւն է ստացած և ուրիշ անդամ նոյն  
տեսակ վիճակի մէջ դանուած ատենը աւե-  
լի քաջութեամբ կը միցի նորա դէմ : Այս է  
բնութեան վարժեցուցած կերպը և զգուշա-  
նալու է նորա հակառակ շարժելէ : Փորձա-  
ռութիւնը կուսուցանէ որ , աւելի փափկա-  
սուն մանկունք կը մեռնին , քան յերախա-  
յութենէ ամեն կերպով նեղութեանց ,  
կարօտութեանց և դժուարութեանց վար-  
ժուողք :

Քանի որ մարմինը որ և է կերպով վար-  
ժուած չէ , դիւրին է առանց վտանդի ըստ  
կամաց վարժեցնել զայն : Իսկ երբ նա ան-  
դամ մը այս կամ այն բանին վարժուեր է ,  
յայնժամ ամեն տեսակ փոփոխութիւն վնա-  
սակար լինի : Տղայ մը այնպիսի փոփոխու-  
թեանց կընայ մտնել որ չափահաս անձի մը  
համար անկարելի է : Առանց առողջութիւնը

և կեանքը վտանգի տակ դնելու հնար է  
աղայ մը ուղած կերպով վարժեցնել :

Ինչպէս որ մայրը իր զաւկին բուն դար-  
մանին է այնպէս ալ հայրը նորա բուն դաս-  
տիարակն և ուսուցիչն է : Ասոնք երկուքն  
ալ իրենց պարտաւորութեանց կատարմանը  
մէջ միաբան գործելու են : Հայր մը, որքան  
որ անուսումն լինի, եթէ քիչ մը խելք ունե-  
նայ ամենալարպետ ուսուցիչն աւելի կա-  
լող է իր որդին կրթել :



## Գ Լ Ո Ւ Խ Թ.

Մանկունք հիւանդութիւններէ ադահովոցնէշ .

Փոքրիկ մանկունք ֆիզիդապէս չափահառ-  
ներէ կը տարբերին . նոցա մարմնոյն հաստա-  
տուն մասունքը թոյլ և կակուղ լինին և ուս-  
տի նոքա գրգուման աւելի ենթակայ են քան  
չափահասք : Ուստի նոքա ինչպէս որ գիւ-  
րաւ կը հիւանդանան այնպէս ալ շուտով  
կրնան բժշկութիւն . այս է նոցա շուտով հոգնե-  
լուն , ստամոքսի պղտորման , ջղաց ձրդտ-  
ման և մորթի հիւանդութեանց պատճառը :

Երբ ընութեան համաձայն կենցաղավա-  
րութեամբ մանկանց անդամք զօրութիւն և  
հաստատութիւն ստանան , և նոցա թոյլու-  
թիւնը նուազի և զանոնք թոյլ և դիւրա-

գըրգիռ ընող պատճառներն ալ վերցուին  
յայնժամ մանկանց առողջութիւնը և կայ-  
տառութիւնը գիւրաւ կրնայ պահուիլ :

Մարդկային արարածոց մէջ ամենէն ա-  
ւելի մանկունք սենեակին առաջանեալ օրէն կը  
վնասուին : Շնչառութեամբ , գէշ հոտերով  
և գոլորչիքներով ապականեալ օդը մանկանց  
կենսական չերմութիւնը կը նուաղացնէ և իր  
խոնաւութեամբը ջղերու թոյլութիւն կը  
պատճառէ : Խանաւ օրը երախայական կեան-  
քը քանի մը ժամի մէջ պիտի վերջացներ ե-  
թէ արուեստական չերմութեամբ , վառա-  
րանի և ծածկոցներու միջոցաւ նորա խո-  
նաւութիւնը չվերցուեր . և որովհետեւ ար-  
հեստական չերմութիւնը մարմնոյ թոյլութիւ-  
նը և ջղերու գրգիռն կաւելցնէ ուստի յայտ-  
նի է որ մանկանց վերաբերեալ հիւանդու-  
թեանց մեծագոյն մասը շարունակ սենեակի  
մը ապականեալ օդին մէջ մնալէն կը պատ-  
ճառի . մանկանց շատերը այս պատճառաւ կը  
մեռնին : Ապականեալ օդը մանկունք կը նի-  
հարացնէ և փորհարութիւն , ջղաց ձրդտու-  
մին և Անդղիական հիւանդութիւն յառաջ  
կը բերէ :

Ընդհանրապէս մանկունքը իններորդ ամ-  
սուան ատենները ակռայ հանելու գժուա-  
րին պարտուց տակ կը մտնեն և յայնժամ  
բաղկաց և մէջքին ջիղերն նիհար , թոյլ և  
անզօր լինին , փորին մաշկը կը լարուի , գըլ-

խուն և աւելի ճակատին վրայ բորբոքման նշաններ կը տեսնուին , երեսը տժգոյն կըլլայ , աչքերը դուրս կըցցուին , վիզը կը բարակ-նայ , արեան երակներն կը լցուին , քիթին ծակերը կը մեծնան , շունչը կը բռնանայ , կուրծքը դուրս կըցցուի , կողքերուն ոսկոր-ներն ներս կը ծոփին , բոլոր ոսկորները կը կակլանան և ամբողջ մարմինը կը տձեւանայ : Մանկանց բոլոր ուրիշ թեթեւ հիւանդութիւններն սենեակին օդին մէջ կը սաստկա-նան , կերկարին , մահարեր լինին և խիստ դժուարաւ կը բժշկուին : Թէեւ օրը , գոնէ ժամ մը , սենեակին պատուհաններն և դուռ-ներն մաքուր օդին բաց թողլով մանկանց վերաբերող հիւանդութեանց պատճառներն կրնան վերցուիլ , սակայն խիստ մեծ տարբե-րութիւն կայ սենեակի մը մաքրուած օդին և բացօդեայ գաշտերուն , մարդագետիննե-րուն և պարտեզներուն պայծառ և մաքուր օդին մէջ :

Մանկունք , բաց օդի մէջ մաքուր և քաղջ պահելով , մորթի և գլխու վէրքերէ աղատ մնան , ոչ վիզերնուն վրայ , ոչ բազկաց տակ , ոչ ականջներուն ետին ոչ ալ սրնգաց մէջ տեղը վէրք կունենան : Եթէ փոքրիկ վէրք մ'ալ պատճակելու ըլլայ մարմնական մաքրութեան փոքր ինչ աւելի հոգատար լինելով և մամնուի փոշի ցանելով շուտով կանցնի : Ամենէն առաւել ստամնքսի աւեր-

ման բարձումը պէտք է հոգալ : Մակնէ-սիա կոչուած դեղը և ստրէի խեցին փո-շին միայն ժամանակաւոր դեղեր են ստա-մոքսի աւերման դէմ . սակայն մաքուր օդն և կերակրոց և ըմպելեաց չափաւորութիւնը և ընտրութիւնը մանկանց ստամնքսի տկա-բութեանց հիմնական դարմանն են : Քաղցը և պարարտ կերակուրներն տղայոց ստամնք-սը կաւրեն . կարկանդակը , քաղցրաւենին , գետնախնձորն և ալիւրէ թանցրաթանը առատօրէն նոցա ստամնքսը լեցնելը՝ ման-կունք գերեզման առաջնորդել է : Տղայք քանի որ փոքր են քիչ և յաճախ լաւ ե-փած , սպիտակ ցորենի հաց և կաթ ուտե-լու են . իսկ երբ քալել սկսին յայնժամ դիւ-րամարս պտուղներ և բանջարնդէններ և հա-սարակ հաց կրնան ուտել , միայն թէ խիստ չափաւոր կերպով և օրը 3 կամ 4 անգամ : Տղայք մինչեւ որ իրենց անդամներն աղա-տաբար գործածել չկարողանան միս ուտե-լու չեն :

Վնասակար է տղայք առանց փոքրիկ զբաղմանց մէկ կողմլուիկ մնչիկ նստեցնելը . սակայն ամենէն աւելի վնասակար բանն է փոքրիկ մանկանց մոտաւորական աշխատու-թիւն կատարել տալլ . ասով մարմինը տհաս փոքրիկ տկար և տձեւ կը մնայ :

Ոմանք ալ կաճապարեն մանկանց խօսել սովորեցնելու իրեւ թէ նոքա ինքնիրեն-

նուն չեն կարսղ սովորիլ : Բաւական է մանկանց միայն քանի մը դիւրը մրռնելի բաներ սովորեցնելն , բառերուն նշանակած առարկայներն նոյց ցոյց տալով . սակայն նայելու է որ բառերը որոշ և հասկնալի հնչեն . յայնժամ խօսելու դործարաններն կամաց կամաց կը կատարելագործին , ձայներնին քաղցրահընչիւն լինի և յիշողութիւնը չ' ծանրաբեռնիր :

Օտարներուն աղոտոտ և պիղծ տղայքը մանկանց շրջանէն հեռու պահելու է . նոքաշատ անդամ փոխոխական հիւանդութեանց սերմն իրենց մէջը կը կրեն : Աղախինք ալ մանկունքը օտար տուները մանաւանդ հիւանդաց սենեակները երբէք տանելու չեն :

Փոքրիկ մանկանց գոյնդգոյն խաղալիք տրուելու չէ . գոյները թոյներէ կը բաղադրին և բազում անմեղ մանկունք իրենց առողջութիւնն և կեանքը խաղալիքներու պատճառաւ կորուսած են : Վտանգաւոր է նաեւ քարի կոտրներ , քայլախաղ , լուրիայ , ապակի , գնդասեղ , կոճակ , դրամ , դանակ , պատճառագաղ կամ մլրաս իրեւ խաղալիք մանկանց առջեւը ձգելը , շատ տղայք անոնց պատճառաւ վնասուած կամ սարսափելի ցոյցքերով խեղդուած են : Նաեւ տղայք սեղանի վրայ նստեցնելով և մինակ թողլով շատերը անկից վար կյանալով խեղանգամ են եղած :

Աղախինք և նաեւ մայրեր չգիտնալով տղայք գրկելու կերպը , բազում աղետակի

արկածոց տեղի կուտան : Տղան գրկած ատեն նորա կռնակը կամ մօրը կուրծքին կը թընելու է և մօրը թեւերը մանուկին կողքերն ամփոփելու են , կամ թէ տղան մօրը բազուկին վրայ նստելու է և նորա թեւին արմատին կը թնելու է : Այս երկու կերպէն զատ գրկելու բոլոր ուրիշ ձեւերն վտանգաւոր են :

Տղայոց լոկ զգուշութեան կամ աննշան գէպքերու համար գեղ տալը յիմարութիւն է և վնասակար : Տղայք սովորելու են փոքրիկ գժուարութեանց համրերելով իրենց կազմութիւնը կարծրացնել : Գժուար պարագայից տակ ոչ թէ միայն հմուտ բժիշկ մը կանչելու է այլ նորա կարգադրութեանցը կէտ առ կէտ հետեւելու է :



## ԳԼՈՒԽ Ժ.

Մանկանց նախական կրթութիւնը :

Մանկունք ծնելէն անմիջապէս յետոյ կուլան , և միշտ նեղութիւն և անհանգը տութիւն զգացած ատեննին լալով այս զգացումը մեղի կարտայայտեն : Տղայք իրենց կարօտութիւններն անձամբ չեն կարող լեցնել , այլ լալով ուրիշները օգնութեան կը կանչեն : Երբ անօթի կամ ծարաւի են կուլան , երբ կը մսին կուլան , երբ չափէն

աւելի տաքութիւն զգան կուլան • երբ շարժիլ կուղեն կուլան և երբ քնանալ կուղեն կուլան : Ուստի հարկ է նոցա կարօտութիւններն հասկնալ և ըստ այնմ օդնել նոցա : Յորժամ տղայք լալը կը շարունակեն , այս պարագայիս մէջ ոչ նոցա սպառնալիք ընելու ոչ ալ զանոնք փայփայելու է . երկուքն ալ վնասակար են , զի մանկիկը կը սովորի թէ ինչ ընելու է փայփայուելու համար և կըլլայ յամառ . իսկ սպառնալիք և հայհոյանք նոցա կարօտութիւնը չեն կարող լեցնել :

Լալու սովորութեան չափաղանցութիւնը նուածելու միակ միջոյն է մանկանց աղաղակներուն ականջ չկախել : Ոչ ոք փուճ տեղը կը ճշէ , այսպէս են նաեւ մանկունք : Յիրաւի կան յամառ տղայք , սակայն երբ իրենց յամառութեանը դէմ հաստատակամութիւնը կուտի շուտով անձնատուր պիտի լինին : Այս կերպով մանկունք արցունքներն խնայել և զանոնք միայն ցաւ ունեցած ատեն ցցնել կը սովորին : Լալէն այնքան վախնալու չէ . առողջ և մաքուր օդի մէջ մեծցած տղայ մը , այն , մինչեւ անդամ տկարակաղմ և հիւանդուտ մանուկ մը , լալով ինքինք վնասէր : Երբ տղայք կամակորութեամբ լան յայնժամ նոցա աչաց հաճոյական և զարմանալի առարկայ մը ներկայացնելու է որով լալերնին կը մոռնան :

Սակայն զդոյշ լինելու է որ տղայք չգգան թէ զայս ընելով մեր նպատակը իրենց լալը մոռցնել էր : Որքան կը սխալին այս կէտիս մայրերն և աղախիններն :

Ասկից այլ եւս կարեւոր է տղայոց բարկութեան , դժկամակութեան և յամառութեան հակամիտութիւնը ջնջել : Ասոնք վըտանդաւոր յատկութիւններ են , այս , աւելի վտանդաւոր քան թէ օդին և եղանակին վնասակար աղդեցութիւնները : Այս վատ հանդամանքները ծնունդ կառնուն և մանկանց սրտերուն մէջ կարմատանան երբ զանոնք մեր ընթացքովը կը դրգուենք , անհամբեր կընեմք և կը բարկացնենք : Եղր տղայք միայն առարկայից և ոչ թէ այլոց կամացը մէջ դիմադրութիւն մը նկատեն յայնժամ հաղիւ բարկասիրտ և կամակօր պիտի լինին և աւելի առողջ կեանք պիտի վարեն : Ուստի թէ ծնողք և թէ աղախինք իրենց մանկանց հետ ունեցած յարաբերութեանցը մէջ այս կէտիս ուշադրութիւն ընելու են :

Վախը այն ունակութիւններէն մին է որք առողջութեան վրայ վնասակար աղդեցութիւն ունին : Երկիւզը մարդկային բնական տկարութեանը արտայայտութիւնն է . ամենայն ինչ որ մարդուս , մանաւանդ մանկանց նոր է , վախ կը պատճառէ : Այն որ ամեն օր պիղծ բաներ կը տեսնէ նորա համար

պղծութիւնը բան մը չէ . այն որ ամեն օր վտանգի մէջ է վտանգէ չլախնար : Ուստի պէտք է տղայք վարժել ամենայն ինչ տեսնել և ամենայն ինչ շոշափել միայն թէ վախ պատճառող առարկաներն կամաց կամաց երեւան հանելու է և այս առարկաներուն վրայ հետաքրքրական և գեղեցիկ կէտերն մանկանց ցոյց տալու է . յայնժամ նոքա ուրախութեամբ պիտի ուզեն այն կարծեցեալ երկիւղալի առարկաները : Այսպէս կրնայ նաեւ երկիւղալի բայց անմնաս կենդանիներէն և անսովոր ձայներէ տղայոց ունեցած վախն չնջուիլ :

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա .

Մանկանց ակռայները .

Երբ մանկանց ակռայները բուսնիլ կսկըսին յայնժամ զանոնք կաթէն կտրելու ժամանակն հասած է : Ակռայներն սովորաբար գժուար երեւան կելլեն և անտանելի ցաւ կը պատճառեն մանկանց : Սոյն միջոցին արդայք ինչ որ գտնեն բերաննին կը դնեն և կը ծամեն : Ումանք ակռայ հանող տղայոց ոսկորէ կամ ապակիէ խաղալիք կուտան որպէս զի զանի բերաննին դնելով ծամեն և իրենց ցաւերուն դարման մը գտնեն . ասի վատ սովորութիւն մ'է, ինչու որ ակռային միսը այս

կերտով կը կարծրանայ և ակռայներուն դուրս ցցուիլն այլ եւս կը գժուարանայ : Այս մասին կենդանիներէն կրնանք դաս մ'առնել . նոքա ակռայ հանած ատեննին ոչ երկալթ ոչ ալ ոսկոր բերաննին կառնուն , այլ փայտ , կաշի , լաթի կտորներ , և ուրիշ կակուղնիւթեր : Կտոր մը հացի կեղեւ կամ այլ անմնաս բան մը ակռայ հանող մանկան հաղար անգամ նախապատիւ է քան թէ ամենաշքեղ կարծր խաղալիքը :

Այն մանկունքը որ մաքուր և առողջ օդի մէջ մեծցած են ակռայ հանած ատեննին այնքան գժուարութիւն չեն կրեր : Գիւղացիներուն տղայքը բերաննին շատ ակռայներ կունենան քանի որ մայրը ասի գեռ բընաւ չ'գիտէր : Այն մանկունքը որ խիստ գժուար ակռայ կը հանեն Անդղիական հիւանդութեան ընդունակ են : Մաքուր օդն առատապէս վայելելու բարերախտութիւնը ունեցող մանկունք իններորդ ամսուան մէջ երկու ակռայ կունենան . երբեմն ալ կը պատահի որ չորս հատ ունենան գրեթէ առանց փորհարութիւն և տկարութիւն ունենալու : Արուեստական կերպով մանկանց ակռայներն երեւան հանելը փորձառութեամբ տեսնուած է որ վսասակար է , զի այսպիսի կերպով եւլած ակռայներն անզօր լինին և ատամանց նպատակին չեն կարող ըստ պահանջման ծառայել :

կան կենաց մէջ կը մտնեն , այո , այս նոր վիճակիս մէջ ալ երիտասարդական ընթացքնին կը շարունակեն :

Հոգւով և մարմնով բարեկազմ մանկունք ունենալու համար պարտին նաև ամուսինք ամուսնական յարաբերութեանց և սիրոյ մէջ շնչառ ըլլալ : Ամեն մտական և մարմնական կարողութիւնք չափեն աւելի գործածուելով կը մնասուին և թերի արդիւնք յառաջ կը բերեն : Ասի ամուսնութեան մէջ լաւ նկատուելիք կէտ մ'է , զի անկից կախեալ է ամուսնոց և մանկանց մարմնոյ և հոգւոյ կացութիւնը :

Նաև տեսնուած է որ կանայք յղութեան ատեն իրենց պարտաւորութեանցը անհոգինելով տձեւ և ամեն տեսակ թերութիւններով լի տղայք կունենան : Ուստի բարեկազմ մանկունք ունենալու համար յղի կանայք իրենց պարտքերն ծշդութեամբ կատարելու են . նաև նոցա տեսութենէն ոչ թէ ամեն տեսակ տղեղ ու պէտակի առարկաներն հեռացնելու է , այլ նոցա շրջանին մէջ գեղեցիկ պատկերներ և տեսարաններ գնելու է . ինչու որ արտաքին երեւոյթք մօրն արդանդին մէջ կազմուող մանկան վրայ մեծ ազդեցութիւն ունին : Յղի կանանց համար ժամանակը անտանելի լինելու չէ , ուստի խօսակցութեամբ ջանալու է երկար ժամերն համառօտել . միայն թէ խօսակցութեան չափը , կերպը և

# ԳԼՈՒԽ ԺԲ.

Բարեկազմ մանկունք .

Փորձով տեսնուած է որ առողջ և հոգւով մարմնով բարեկազմ ծնողը իրմանց բոլորովին աննման տղայք են ունեցած : Դարձեալ տեսնուած է որ մի և նոյն ծնողաց տղաքներէն ոմանք խելացի և բարեկազմ են և այլք առրա հակառակը : Դարձեալ կան հոգւով և մարմնով բարեկազմ մանկունք որոնց ծնողքը ասոր հակառակին էին : Վերջապէս աս ալ տեսնուած է որ այն ամուսինք որ զիրար ՚ի բոլոր սրտէ կը սիրեն ընդհանրապէս հոգւով և մարմնով բարեկազմ տղայք կունենան : Այս ամեն փորձառութիւններէն կը հետեւի որ ամուսնական կենաց մէջ ամուսինք հարաբեկան ուրանուալու են առ միմեանս և ականյ կամ ուժկամկանութեամբ և զայտանու սոյն կենաց պահանակ չեն : Այս հետեւութիւնը կը հաստատուի նկատելով որ հարուստներուն տղայքը շատ անգամ անխելք ու տգեղ լինին իսկ բարեբարոյ հասարակ մարդկանցը խելացի և առողդ : Արդ անուրանալի ճշմարտութիւն մ'է որ հասարակ մարդիկ ամուսնական կենաց մէջ աւելի սէր և հաւատարմութիւն կը բերեն քան թէ հարուստները : Հարուստներէն շատերը իրենց սէրը երիտասարդութեան ատեն սիրահարութեամբ այնքան վատնած են որ առանց սիրոյ ամուսնա-

Նիւթը լաւ դիտնալու է : Յղի կանայք կարդացած գրքերնուն ալ խիստ զգուշ լինելու են . դրգովիչ և անբնական վէպերն բոլորովին զանց առնելու են նոքա : Թէ խօսակցութիւն և թէ ընթերցումն պարզ և հաճոյական լինելու են որ հոգին և զդացումներն չ'գրգուեն :

Մօր մը և իր մանկան համար դժբախոգութիւն մ'է երբ յզութեան միջոցին որ և է յանկարծական և անակնկալ նեղութիւն մը նորա սիրտն և հոգին ճնշէ : Ասի եթէ որդենութենէն ետեւ շարունակուի կամ անկից անմիջապէս ետքը տեղի ունենայ , յայնժամ մայրը իր որդին անձամբ սնուցանելու չէ : Հաղարաւոր օրինակներով ապացուցեալ է որ մանկունք մօրը կաթին հետ նորա ներքին ցաւերն և տրտմութիւններն ալ կը ծծեն :

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Արտօնքաւումն արու . կամ եզ երախայից .

Արու կամ էզ մանկանց արտադրմանը նկատմամբ ըսելիքնիս միայն բժշկական կարծեաց և ոչ թէ ապացուցեալ իրողութեանց վրայ կը կայանայ . միայն թէ կարծեաց մէջ ալ երբեմն ճշմարտութիւն դանուելով և գրքովկիս նպատակն այս նիւթս ալ պարու-

կելովյարմար դատեցինք քանի մը կանոններ տալ :

Ծննդական արարքին մէջ այրն և կինը բաժին ունին , և այս երկու սեռերէն որը որ զօրաւորագոյն ազդեցութիւն ունենայ ծնունդ առնող երախային նորա սեռն իր վրայ կառնու : Այս նպատակիս հասնելու համար երկու ճամբայ կայ , մին ֆէլքէական և միւսն բարյական : Ֆիղիգական ճամբան է մերձաւորութենէ ետ կենալ (որպէս զի արտադրիչ հիւթերն աւելի զօրութիւն և գրգիռ ստանան) և սննդարար կերակուրք : Բարյական միջոցն է զուարթութիւն մտաց և պայծառ և հաճոյական պատկերներով զբաղեալ երեւակայութիւն . Այս երկու միջոցները ամուսնացելոց մին կամ միւսը գործածելու է . այսինքն էզ երախայ բաղձացեալ ատենը մայրը իսկ արու պահանջուած միջոցին հայրը : Այս գաղաբարը հաստատութիւն կ'ստանայ նկատելով որ զօրաւոր և առողդ մարդիկ սովորաբար մանչ կունենան իսկ տկարք աղջիկ . նաեւ գեռահասք և ծերք ընդհանրապէս աղջիկ կունենան , և վերջապէս սիրոյ , կերակրոց և ըմպելեաց մէջ շռայլութեամբ անձերնին տկարացնողները շատ քիչ անդամ մանչ կունենան : Ասի նաեւ բազմակնութեան մէջ ապրող ամբողջ ազդաց օրինակներն ալ կապացուցանեն :

Ուրիշ կարծիք մ'ալ կայ որ կուզէ հաս-

տատել թէ մօրն արդանդին մէջի երկու ձուարանքներէն մին իդական և միւսն արական ձու կը պարունակէ . և թէ ասոր համաձայն մարդկանց երքու ամորձեաց մին իդական և միւսն արական սերմ կը բովանդակէ :

Վերջապէս երախային ծնելէն առաջ նորա սեռն որոշելու նկատմամբ կրատի թէ երբ մօրն զգացումներն արթուն են , շարժումներն թեթեւ և մարմնոյ փոփոխութիւնք անդշան յայնժամ արդանդին մէջ արու երախայ մը գուշակելու է . ասոր հակառակը տեսնուած ատեն արդանդին պառողը էգինելու է :



## Գ Լ Ո Ւ Խ Ժ Դ Ի .

Պահպանութիւն ստամոբսի .

Ստամոքսին առողջութենէն բոլոր մարդկային մարմնոյ առողջութիւնը կախեալ է : Ստամոքսն տկարութիւն կրած ատենը մարմնոյ գործողութիւնք կը խանդարուին և առով մարմնոյ և հոգւոյ վրայ թոյլութիւն կըսփուի :

Ամեն տեսակ գրդուում որ ուրախութենէ , վախէ , բարկութենէ , ստակումէ եւայլն յառաջ կուգայ ստամոքսին վրայ կազդէ : Այս ազդեցութիւնը երբեմն այնպէս անմիջական է որ յանկարծական ուրախութիւն

կապացուցանեն որ ամուսնութիւնը շատերուն է՛ւչնէր մ'է և բաղումք առանց նորա վրայ որոշ դաղափար մը ունենալու սոյն վիճակին կը ձեռնարկեն : Գաւառացիք ըստ ասիական սովորութեան իրենց ծաղկահասակ աղջկունք և պատանիք կամուսնացնեն . հոն ամօթ կը սեպուի որ երիտասարդը իր բոլոր կենացը համար որոշեալ ընկերը անձամբ ընտրէ , մայրը ինչ որ կարգագրէ նա կոյր հնազանդութեամբ նորա հետեւելու է և պսակուելէն ետեւ իր ամուսնոյն երեսը տեսնելու է : Պօլսոյ մէջ դրամական ամուսնութիւնք կը կատարուին . ուր որ առատ դրամ կայ հոն կը վազեն օրիորդք և երիտասարդք առանց բնութեանց կամ մարմնական յարմարութեանց նայելու : Լրագիրք դեռ մօտերս քանիցա 70 տարեկան մարդոց 17—18 տարեկան օրիորդաց հետ պսակուելնին ծանուցին : Յայտնի է որ այսպիսի ամուսնութեանց մէջ ամուսնական սէր չկրնար լինել , և ուստի զարմանալի չէ երբ մարդիկ դիշերները սրճարաններն և գինետուններն իրենց ժամանակը անցունելով , ուխտած են իրենց ամուսինները կանգեղի լուսով տեսնել և երբ ընտանեաց մէջէն անմիաբանութիւնը և կոիւը պակաս չէ : Ասոր հետեւանքը այս է որ՝ այսպիսի ընտանեաց տղայքը ինչ որ տեսնեն իրենց ծնողաց վրայ նոյնը իրենք ալ պիտի գործադրեն երբ պատեհութիւն գտնեն :

Չենք կրնար ամուսնական կենաց մէջ տես-  
նուած ամեն անկարգութիւնք թուել, բա-  
ւական է որ ըսենք թէ կանանց բազմաթիւ  
և երբեմն անբուժելի հիւանդութիւնք,  
մանկանց հոգեկան և մարմնական թերու-  
թիւնք, անկրթութիւնք և սրիկայութիւնք,  
շատ էրիկներու հոգւով և մարմնով վատ-  
թարանալն և կործանիլն, ասոնք ամենն ալ  
ցոյց տան որ ամուսնութիւնը բազմաց հա-  
մար թաքուն գաղտնիք մ' է :

Այս գաղտնեաց վրայի քողը ջանացինք  
ըստ կարողութեան վերցնել, հետեւելով  
գերմանացի հռչակաւոր բժշկի մը դրութեա-  
նը և կը յուսանք որ դրբոցի լաւ Աւուշուր-  
մը պիտի լինի այն ամենուն՝ որ բաղձան ա-  
մուսնութեան պտուղներն ըստ Աւուշուր-  
մունկաց լինեն չուել :

## ԳԼՈՒԽ Ի.

### ԽՕՍՔ ԱՌ ԱՄՈՒԽԻՄ

Ամուսնացելոց և ամուսնացողաց համար  
դրբոցի բաւական խրատներ և կանոններ  
տուաւ : Սակայն ցաւալի է ըսել որ ազգիս  
մէջ կարդ մը երիտասարդներ ալ կան որք  
ուխտած են ամուրի մնալ . ուստի հարկ է  
նաեւ նոյս քանի մի խօսք ըսել և իրենց  
ճանապարհին, 'ի կործանում առաջնորդենց  
ցոյց տալ :

1. Փորձառութիւնը կը սովորեցնէ որ ամա-  
սնուն որ երկար կնաց արժանի են եղած, այսուհետեւ չեն  
այլ ամուսնացեալ են :

2. Ամուսնական կեանքը ամենազուտ և  
միօրինակ ուրախութեանց ազրիւրն է . ըն-  
տանեկան ուրախութեան հետ ո՞ր զուար-  
ճութիւնը կրնայ մրցիլ : Յերաւի սակաւ են  
այն ընտանիքները ուր այս անխառն և զուտ  
ուրախութիւնը կը փայլի, բայց ո՞վ է սորա  
պատճառը . ամուսնական դրութիւնը . քաւ  
լիցի : Պատճառը ամուսնական կենաց պա-  
հանջմանց անչեալ լինելն է : Ի՞նչ կը հետեւի  
ասկից . կը հետեւի որ եթէ մարդիկ սովորին  
ամուսնութեան պահանջներն և զանոնք գոր-  
ծադրեն անտարակոյս երջանիկ պիտի լինին  
այն կենացս մէջ :

3. Ամուսնական կեանքը միակ միջոցն է զայտական գրդիռք ըստ կանոնի և որոշման դործածելու : Աւելորդ է բաել որ բաղմաթիւ երիտասարդք Նախախնամութեան այս շրջանին անցնելով հոգւով ու մարմնով անդործածելի , զզուելի և իրենց և այլոց ձանձրակի լինին : Կարդա՛ Արմենակ Հայկունիի Գերեզմանք Երիտասարդացը և Գարնան Ծաղիկները և յայնժամպիտի սարսափիս ամուսնութեան աստուածադադիր կարդադրութիւնը եղծողներուն դատաստանին նկարագրութիւնը տեսնելով :

4. Բարեբախտ ամուսնութիւնք կառավարութեանց գլխաւոր հիմունքն և անդորր և երջանիկ կենաց առհաւատչեայներն են : Ամուրիք սովորաբար անձնասէր և կրից գերի լինին , նոքա ոչ հայրենեաց և ոչ ալ տէրութեան շահերն կը մտածեն . ազատութեան սխալ զդացումը զանոնք շղթայակապ ըրած է և ճիշդ այս է որ զայնա ամուրի կենաց առաջնորդած է : Ապստամբութեանց և յուղմանց ով առաւել հակամուեալ և ենթարկեալ է քան զամուրին : Ամուսնացեալք սորաբորովին հակառակն են :

5. Ամուսնական կեանքէն է կախեալ աղդաց և ժողովրդոց թուական զարդացումը . ուստի այն որ իր աղդին բարոյական և մըտարական զարդացմանը հետ նաև նորապրտաստ ընդարձակուին և ճիւղեր ար-

ձակելն կը բաղձայ , նա է ճշմարիտ աղդասէր և հայրենասէր : Այս տեսակ անձինք ջանալու են բանիւ և արդեամբ ամուսնական կեանքն դառնացնող և անկարելի ընող պատճառներն աղդիս մէջէն վերցնել և սոյն կեանքը ամենայն կերպիւ դիւրամաշշելի ընել :

Ամուսնական կեանքն դառնացնող պատճառներն վերցնելու ենք ըսինք . որո՞նք են այս պատճառները : Նախ կանանց նորածունեան անյաղթելի բաղձանքը սովորաբար պատճառ է եղած բազում ամուսնութիւնք դառն ու անտանելի ընելու : Այրն ճգնի , աշխատի , հոգնի , քրտնի , նեղուի և տանջուի — կինը նորաձեւ զգեստներ հագնի : Ասի անիրաւութիւն է և սիրոյ պակասութիւն , շռայլութիւն և անխանայութիւն : Ուստի եթէ ամուսնական կեանքը բարեկարդուելու է կանայք և օրիորդք նորաձեւութեան մէջ ինքզինքնին սանձահարելու են :

Ամուսնական կեանքն դառնացնող ուրիշ պատճառ մ'է կանանց ընտանեկան պարտուց մէջ ըրած շանցաւունիւն + և անհոգունիւն + : Այրն բոլոր օրը ընտանեաց սիրուն համար բուռն աշխատանաց կը ձեռնարկէ և հարկաւ երբ երեկոյին իր ընտանեաց շրջանը կը վերադառնայ ամենայն ինչ կարդադրեալ կուղէ տեսնել : Կանայք այս կէտիս անփոյթդանուելով իրենց ամուսնոց սիրոյն պաղելոյն պատճառ կուտան . իսկ երբ ամուսնա-

կան և ընտանեկան սէրն անդամ մը պաղած  
է յայնժամ ամուսնութիւնը հոգեւարք է :  
Վերջապէս պէտք է գիտնալ որ մարդս ինչ  
պէս որ աշխարհ կուգայ նոյն կերպով ալ  
անկից կերթայ : Իբր երախայ այս կեանքս  
կսկսինք և իբր երախայ զանի կաւարտեմք :  
Մարդս 'ի սկզբանէ ինչպէս որ տկար և ա-  
նօգնական էր, ծերանալով նոյն վիճակին կը  
վերադառնայ, և յայնժամ այլոց օգնութեա-  
նը կը կարօտի, այլք պէտք է վերցնեն,  
տանին և կերակրեն զայն : Ծերացեալ մարդը  
դարձեալ ծնողաց կը կարօտի, և ահա մեր  
տղայքը ուրախութեամբ մեր նոցա ցոյց  
տուած օգնութիւնը կը փոխարինեն : Ինչ  
սքանչելի կարգագրութիւն Նախախնամու-  
թեան . ինչ իմաստուն նպատակներ կան ա-  
մուսնութեան մէջ : Այս երանի նորա որ Ա-  
րարչին իրեն պարզեւած երջանկութեան  
միջոցներն ուղիղ գործածել գիտէ և բիւր  
երանի նորա որ ըստ նոցա կեանք վարէ :

## ՎԵՐԶ

ՅՈՒՆՎԱՐ 31 ՕՐ			ՓԵՏՐՎԱՐ 28 ՕՐ		
ՕՐ ՀՈԳՈՎՈՐՆԵ- ՐԱՆ	ՕՐ Ա. ՀԱՐԺՄԱՆ ԵՐԱԽԱՍՅԻՒ	ՕՐ ՈՐԴԻԾԸ- ՆՈՎՈՒԹԵԱՆ	ՕՐ ՀՈԳՈՎՈՐՆԵ- ՐԱՆ	ՕՐ Ա. ՀԱՐԺՄԱՆ ԵՐԱԽԱՍՅԻՒ	ՕՐ ՈՐԴԻԾԸ- ՆՈՎՈՒԹԵԱՆ
ՅՈՒՆՎԱՐ	ՄԱՅԻՍԻ	ՀՈԿՏԵՄԲ.	ՓԵՏՐՎԱՐ	ՅՈՒՆՎԱՐ	ՆՈՅԵմ.
1.	10.	7.	1.	10.	7.
2.	11.	8.	2.	11.	8.
3.	12.	9.	3.	12.	9.
4.	13.	10.	4.	13.	10.
5.	14.	11.	5.	14.	11.
6.	15.	12.	6.	15.	12.
7.	16.	13.	7.	16.	13.
8.	17.	14.	8.	17.	14.
9.	18.	15.	9.	18.	15.
10.	19.	16.	10.	19.	16.
11.	20.	17.	11.	20.	17.
12.	21.	18.	12.	21.	18.
13.	22.	19.	13.	22.	19.
14.	23.	20.	14.	23.	20.
15.	24.	21.	15.	24.	21.
16.	25.	22.	16.	25.	22.
17.	26.	23.	17.	26.	25.
18.	27.	24.	18.	27.	24.
19.	28.	25.	19.	28.	25.
20.	29.	26.	20.	29.	26.
21.	30.	27.	21.	30.	27.
22.	31.	28.		ՅՈՒՆՎԱՐ	
	ՅՈՒՆՎԱՐ		22.	1.	28.
23.	1.	29.	23.	2.	29.
24.	2.	30.	24.	3.	50.
25.	3.	31.			ԴԿԿԱՆ
			25.	4.	1.
26.	4.	1.	26.	5.	2.
27.	5.	2.	27.	6.	5.
28.	6.	3.	28.	7.	4.
29.	7.	4.			
30.	8.	5.			
31.	9.	6.			

ՄԱՅՏ 51 ՕՐ			ԱՊՐԻԼ 50 ՕՐ		
ՕՐ ԸՆԴՌՈՒՆԵ- ՐՈՒԹԵԱՆ	ՕՐ ՀԱՐԺԾԱՆ	ՕՐ ՈՐԴԵՇՐ- ՆՈՎԹԵԱՆ	ՕՐ ԸՆԴՌՈՒՆԵ- ՐՈՒԹԵԱՆ	ՕՐ ՀԱՐԺԾԱՆ	ՕՐ ՈՐԴԵՇՐ- ՆՈՎԹԵԱՆ
Սարս	Ցուցիս	Դեկտեմ.	Ապրիլ	Օգոստոս	Ցուցիս
1.	8.	5.	1.	8.	5.
2.	9.	6.	2.	9.	6.
3.	10.	7.	3.	10.	7.
4.	11.	8.	4.	11.	8.
5.	12.	9.	5.	12.	9.
6.	13.	10.	6.	13.	10.
7.	14.	11.	7.	14.	11.
8.	15.	12.	8.	15.	12.
9.	16.	13.	9.	16.	13.
10.	17.	14.	10.	17.	14.
11.	18.	15.	11.	18.	15.
12.	19.	16.	12.	19.	16.
13.	20.	17.	13.	20.	17.
14.	21.	18.	14.	21.	18.
15.	22.	19.	15.	22.	19.
16.	23.	20.	16.	23.	20.
17.	24.	21.	17.	24.	21.
18.	25.	22.	18.	25.	22.
19.	26.	23.	19.	26.	23.
20.	27.	24.	20.	27.	24.
21.	28.	25.	21.	28.	25.
22.	29.	26.	22.	29.	26.
23.	50.	27.	25.	50.	27.
24.	51.	28.	24.	51.	28.
Օգոստոս			Սեպտեմ.		
25.	1.	29.	25.	1.	29.
26.	2.	50.	26.	2.	50.
27.	3.	51.	27.	3.	51.
Ցուցիս			Փետրվար		
28.	4.	1.	4.	1.	
29.	5.	2.	29.	5.	2.
30.	6.	5.	50.	6.	5.
31.	7.	4.			

ՄԱՅՏ 51 ՕՐ			ՑՈՒՆԵԱԾ 50 ՕՐ		
ՕՐ ԸՆԴՌՈՒՆԵ- ՐՈՒԹԵԱՆ	ՕՐ ՀԱՐԺԾԱՆ	ՕՐ ՈՐԴԵՇՐ- ՆՈՎԹԵԱՆ	ՕՐ ԸՆԴՌՈՒՆԵ- ՐՈՒԹԵԱՆ	ՕՐ ՀԱՐԺԾԱՆ	ՕՐ ՈՐԴԵՇՐ- ՆՈՎԹԵԱՆ
Սարս	Սեպտեմ.	Փետրվար	Ցուցիս	Հոկտեմ.	Նոյեմ.
1.	7.	4.	1.	8.	7.
2.	8.	5.	2.	9.	8.
3.	9.	6.	3.	10.	9.
4.	10.	7.	4.	11.	10.
5.	11.	8.	5.	12.	11.
6.	12.	9.	6.	13.	12.
7.	13.	10.	7.	14.	13.
8.	14.	11.	8.	15.	14.
9.	15.	12.	9.	16.	15.
10.	16.	13.	10.	17.	16.
11.	17.	14.	11.	18.	17.
12.	18.	15.	12.	19.	18.
13.	19.	16.	13.	20.	19.
14.	20.	17.	14.	21.	20.
15.	21.	18.	15.	22.	21.
16.	22.	19.	16.	23.	22.
17.	23.	20.	17.	24.	23.
18.	24.	21.	18.	25.	24.
19.	25.	22.	19.	26.	25.
20.	26.	23.	20.	27.	26.
21.	27.	24.	21.	28.	27.
22.	28.	25.	22.	29.	28.
23.	29.	26.	23.	30.	29.
24.	30.	27.	24.	31.	30.
Հոկտեմ.			Նոյեմ.		
25.	1.	28.	25.	1.	31.
Սարս			Ապրիլ		
26.	2.	29.	26.	2.	1.
27.	3.	30.	3.	3.	2.
28.	4.	1.	4.	4.	5.
29.	5.	2.	5.	5.	4.
30.	6.	3.	6.	6.	5.
31.	7.	4.	7.	6.	5.

ՅՈՒՆԻՍ 31 ՕՐ			ՕԳՈՍՏՈՍ 31 ՕՐ		
Օր Ընդունե- լութեան.	Օր Ա. շաբաթայի.	Օր Որդեծը- նութեան	Օր Ընդունե- լութեան	Օր Ա. շաբաթայի.	Օր Որդեծը- նութեան
Յուղիս	Նոյեմբ.	Ապրիլ	Օգոստոս	Դեկտեմբ.	Մայիս
1.	7.	6.	1.	8.	7.
2.	8.	7.	2.	9.	8.
3.	9.	8.	3.	10.	9.
4.	10.	9.	4.	11.	10.
5.	11.	10.	5.	12.	11.
6.	12.	11.	6.	13.	12.
7.	13.	12.	7.	14.	13.
8.	14.	13.	8.	15.	14.
9.	15.	14.	9.	16.	15.
10.	16.	15.	10.	17.	16.
11.	17.	16.	11.	18.	17.
12.	18.	17.	12.	19.	18.
13.	19.	18.	13.	20.	19.
14.	20.	19.	14.	21.	20.
15.	21.	20.	15.	22.	21.
16.	22.	21.	16.	23.	22.
17.	23.	22.	17.	24.	23.
18.	24.	23.	18.	25.	24.
19.	25.	24.	19.	26.	25.
20.	26.	25.	20.	27.	26.
21.	27.	26.	21.	28.	27.
22.	28.	27.	22.	29.	28.
23.	29.	28.	23.	30.	29.
24.	50.	29.	24.	31.	30.
Դեկտեմբ.	ՅՈՒՆԻՍ 31 ՕՐ			ՕԳՈՍՏՈՍ 31 ՕՐ	
	1.	50.	25.	1.	31.
Մայիս			ՅՈՒՆԻՍ 31 ՕՐ		
26.	2.	1.	26.	2.	1.
27.	3.	2.	27.	3.	2.
28.	4.	3.	28.	4.	3.
29.	5.	4.	29.	5.	4.
30.	6.	5.	30.	6.	5.
31.	7.	6.	31.	7.	6.

ՍԵՊԵՄԲԵՐ 30 ՕՐ			ՀՈԿԹԵՄԲԵՐ 31 ՕՐ		
Օր Ընդունե- լութեան.	Օր Ա. շաբաթայի.	Օր Որդեծը- նութեան	Օր Ընդունե- լութեան.	Օր Ա. շաբաթայի.	Օր Որդեծը- նութեան
Յուղիս	Յունիսը	Յունիս	Հոկտեմբ.	Փետրվար	Յուղիս
1.	8.	7.	1.	7.	7.
2.	9.	8.	2.	8.	8.
3.	10.	9.	3.	9.	9.
4.	11.	10.	4.	10.	10.
5.	12.	11.	5.	11.	11.
6.	13.	12.	6.	12.	12.
7.	14.	13.	7.	13.	13.
8.	15.	14.	8.	14.	14.
9.	16.	15.	9.	15.	15.
10.	17.	16.	10.	16.	16.
11.	18.	17.	11.	17.	17.
12.	19.	18.	12.	18.	18.
13.	20.	19.	13.	19.	19.
14.	21.	20.	14.	20.	20.
15.	22.	21.	15.	21.	21.
16.	23.	22.	16.	22.	22.
17.	24.	23.	17.	23.	23.
18.	25.	24.	18.	24.	24.
19.	26.	25.	19.	25.	25.
20.	27.	26.	20.	26.	26.
21.	28.	27.	21.	27.	27.
22.	29.	28.	22.	28.	28.
23.	30.	29.	23.	29.	29.
24.	51.	30.	24.	1.	29.
Դեկտեմբ.	ՍԵՊԵՄԲԵՐ 30 ՕՐ			ՀՈԿԹԵՄԲԵՐ 31 ՕՐ	
	1.	50.	50.	24.	2.
Մայիս			ՅՈՒՆԻՍ 31 ՕՐ		
25.	2.	1.	25.	25.	50.
26.	3.	2.	26.	2.	2.
27.	4.	3.	27.	5.	4.
28.	5.	4.	28.	4.	2.
29.	6.	5.	29.	5.	3.
30.	7.	6.	30.	6.	4.
31.	8.	7.	31.	9.	5.
Օգոստոս			Մայիս		

ՆՈՅԵՄԲՐԻ 30 ՕՐ			ԴԵԿԱՏԵՄԲՐԻ 31 ՕՐ		
Օր ՀԿԴ. Ամ. ՄԱՅԻՍԻ ՄԱՅԻՍԻ	Օր Ա. ՀԿԴ. Ամ. ՄԱՅԻՍԻ	Օր ՀԿԴ. Ամ. ՄԱՅԻՍԻ	Օր ՀԿԴ. Ամ. ՄԱՅԻՍԻ	Օր ՀԿԴ. Ամ. ՄԱՅԻՍԻ	Օր ՀԿԴ. Ամ. ՄԱՅԻՍԻ
1.	10.	7.	1.	9.	6.
2.	11.	8.	2.	10.	7.
3.	12.	9.	3.	11.	8.
4.	13.	10.	4.	12.	9.
5.	14.	11.	5.	13.	10.
6.	15.	12.	6.	14.	11.
7.	16.	13.	7.	15.	12.
8.	17.	14.	8.	16.	13.
9.	18.	15.	9.	17.	14.
10.	19.	16.	10.	18.	15.
11.	20.	17.	11.	19.	16.
12.	21.	18.	12.	20.	17.
13.	22.	19.	13.	21.	18.
14.	23.	20.	14.	22.	19.
15.	24.	21.	15.	23.	20.
16.	25.	22.	16.	24.	21.
17.	26.	23.	17.	25.	22.
18.	27.	24.	18.	26.	23.
19.	28.	25.	19.	27.	24.
20.	29.	26.	20.	28.	25.
21.	30.	27.	21.	29.	26.
22.	31.	28.	22.	30.	27.
ԱՊՐԻԼ		ՄԱՅԻՍԻ		ՀՈՎՈՅԻ	
23.	1.	29.	25.	1.	28.
24.	2.	30.	24.	2.	29.
25.	3.	31.	25.	3.	30.
ՄԱՅԻՍԻ		ՀՈՎՈՅԻ		ՀՈՎՈՅԻ	
26.	4.	1.	26.	4.	1.
27.	5.	2.	27.	5.	2.
28.	6.	3.	28.	6.	3.
29.	7.	4.	29.	7.	4.
30.	8.	5.	30.	8.	5.
			51.	9.	6.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵ

Յառաջաբան . . . . . 4

- Գլ. Ա. Կոչումն և նպատակ ամուսնութեան 3-9  
 Գլ. Բ. Ամուսնութեան կենաց համար պահանջեալ մարմնական յատկութիւնք . . . . . 10-14  
 Գլ. Գ. Պայմանք և կանոնք ամուսնական յարմարութեան . . . . . 15-20  
 Գլ. Դ. Ցղութիւն . . . . . 20-25  
 Գլ. Ե. Կամինտուութիւն . . . . . 25-28  
 Գլ. Զ. Կամնտու կին . . . . . 29-50  
 Գլ. Լ. Դարմանումն երախսայից . . . . . 50-54  
 Գլ. Ը. Վարժութիւն երախսայից . . . . . 54-56  
 Գլ. Թ. Մանկունք հիւանդութիւններէ ապահովյնել . . . . . 56-41  
 Գլ. Ժ. Մանկանց նախնական կրթութիւնը . . . . . 41-44  
 Գլ. Ժ. Մանկանց ակռայները . . . . . 44-45  
 Գլ. Ժ. Բարեկազմանկունք . . . . . 46-48  
 Գլ. Ժ. Փառագրումն արու կամ էդ երախայից . . . . . 48-50  
 Գլ. Ժ. Պահանութիւն ստամոքսի . . . . . 50-52  
 Գլ. Ժ. Ե. Դարման ամլութեան . . . . . 52-54  
 Գլ. Ժ. Զ. Դարման անկանոն պարբերականի 55-56  
 Գլ. Ժ. Ե. Դարման անկարողութեան . . . . . 56-61  
 Գլ. Ժ. Ճ. Ճշյանի Սթօմաքինը . . . . . 61-62  
 Գլ. Ժ. Ժ. Գաղտնիք և առաջնորդ . . . . . 62-64  
 Գլ. Ի. Խօսք առ ամուրիս . . . . . 65-68  
 Մշտատեւ տարեցոյց ամուսնական 69-74

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

ԳՐՔՈՂԻՍ ՄԵՂԻ ԴԵՂԱԳՐԵՐՆ ՄԻԱՅՆ ԵՐԵւելի դեղարանաց մէջ կրնայ պատրաստուիլ :

---

ՃԵՐՄԱԿԻ ՍԹՈԱՄԱՔԻՆը Եւրոպացի գրավաճառաց ձեռամբ կրնայ բերուիլ :

---

ԳՐՔՈՂԻՍ 59 ԵՐՈՐԴ ԵՐԵՍԻՆ 19 ԵՐՈՐԴ առղին բառար բառը համար պիտի ըլլայ :



## ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Բատ պատեհութեան Առաջնորդ ըն-  
դանէկան անունով տեսլեր պիտի հրա-  
տարակեմք :

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

---

Խասդիւղի Փարմագ-Գափու թա-  
ղը երկուու Վարժարան մ'է բացուած  
ընդ Տնօրինութեամբ սոորագրելցու

ԱԲՐԱՀԱՄ ԱՄԻՐԻԱՆԵԱՆ

---

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ-ԱՆԳՂ.

Աշխատավրեաց

ՏՕՔԹՈՐ ԱՐՄԵՆԱԿ ԱՍՏՈՒՐԵԱՆ

Կը ծախուի Աստուրեանց վաճառա-  
տունը 'ի բերայ Գուլէ-Գափու :

944  
510  
944  
NL0072154

«Ազգային գրադարան»



NL0072154

«Ազգային գրադարան»



NL0072153

